

ԻՆՉՈՒ՞ՊԷՏՔ Է ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԴԱՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆԸ

Հին աշխարհի առաջադեմ չին փիլիսոփայ մեծն կոնֆուցիուսին հարցնում են, թե ի՞նչ կ'աներ ամենից առաջ, եթե ստանար երկիրը կառավարելու պարտականությունը: Նա պատասխանում է, որ **կը սկսեր լեզուն շտկելու գործից:**

Իոսիֆ Բրոդսկին Նոբելեան դասախոսության մեջ արձագանգելով Կոնֆուցիուսին, ասել է. «Ես չեմ յորդորում պետությունը գրադարանով փոխարինել, բայց կասկած չունեմ, որ եթե մեր իշխանաւորներին ընտրելիս լինէինք նրանց ընթերցանութեան փորձի վրայ, ապա աշխարհի մեջ տառապանքը աւելի քիչ կը լինէր»:

Այս **յօդուածաշարը համարում է** լեզուապահպանական հարցերի վերաբերեալ ՀՀ Սփիւռքի նախարարին ուղղուած **բաց նամակիս** (տես «Առաւօտ» 2 ապրիլի 2009թ) առթիւ Լեզուի Ինստիտուտից ստացուած **մասնագիտական կարծիքների պատասխանը:** Սակայն իրականում դա ուղղուած է **ոչ միայն դասական ուղղագրութեան մասին բացասական կարծիք արտայայտող լեզուաբաններին,** այլեւ *բանասիրական կրթութեամբ մեր Նախագահին, մտաւորականութեանը, մանկավարժներին եւ ուսանողութեանը:*

Յօդուածաշարի նպատակն է *հայաստանաբնակ մեր հայրենակիցներին ներկայացնել ուղղագրական հիմնախնդրի (ինչը նաեւ ազգի երկփեղկման կամ մերձեցման հարցերում կարելոր գործօն է համարւում) ծագման համառօտ պատմականը եւ էությունը, որին գրեթէ անտեղեակ են (բացառութեամբ մի փոքր հատուածի) ոչ միայն շարքային քաղաքացիները, այլեւ ուսուցիչների, ուսանողութեան եւ իշխանաւորների գերակշիռ մասը:* Այս հիմնախնդրի վրայ փաստօրէն «Թաբու» է դրուել եւ մեծաւ մասամբ կասեցուել են այդ խնդրի շուրջ հրապարակումները մամուլում ու հեռատեսիլով, քննարկումները , ինչպէս նաեւ այդ թեմայով համահայկական խորհրդածողովների անցկացումը: Աւելին, տարածուել է այն **թիւր** կարծիքը, թե՛ դասական ուղղագրութեան վերականգնումով նպատակ է հետապնդում պաշտօնական լեզուի կարգավիճակ ունեցող արեւելահայերէն գրական լեզուի վերացումը եւ փոխարէնը արեւմտահայերէնը մտցնելը: Այս թիրիմացութիւնը բխում է նաեւ այն սխալից, որ ամենուրեք գործածւում են «արեւելահայերէն ուղղագրութիւն» եւ «արեւմտահայերէն ուղղագրութիւն» արտայայտութիւնները, մինչդեռ **արեւելահայերէնը եւ արեւմտահայերէնը գրական լեզուներ են միայն, որոնց ուղղագրութիւնը եղել է մէկ եւ ընդհանուր դասական ուղղագրութիւնը,** ինչը այսօր պահպանւում է սփիւռքում, իսկ Հայաստանում դադարեց 1922 թուականից, անցնելով արեղեանական խեղագրութեան: Այս յօդուածաշարում խօսքը վերաբերում է ոչ միայն Աբեղեանի «Բարեփոխումներին», այլեւ Գուրգէն Սեւակի՝ 1940 թ. սրբագրած ուղղագրութեանը, որովհետեւ դրա մէջ նոյնպէս պահպանուեցին նախորդ խեղագրութեան հիմքերի

մեծ մասը եւ յայտնի է «հայաստանեան ուղղագրութիւն» անունով, ինչը մենք մեր շարադրանքում կ'անուանենք «աբեղեանասեւակեան» ուղղագրութիւն:

Այս « Բարեփոխումների» աղմկայարոյց թեման շուրջ 85 տարի է, որ ծեծուով է համազգային չափանիշով: Վերջին երեք տասնամեակում այդ խնդրի շուրջ հանդէս են եկել դոկտ-փրոֆ. Ռաֆայել Իշխանեանը, Բանաստեղծ Լեւոն Միրիջանեանը, դոկտ.- փրոֆ. Լեւոն Խաչերեանը, գրող-հրապարակախօս Կարէն Ա. Սիմոնեանը, Սորբոնի Համալսարանի դոկտ.-փրոֆ. Հիլտա Գալֆայեան-Փանոսեանը, ինչպէս նաեւ սփիւռքի յայտնի ազգային ու կուսակցական դէմքեր, լեզուագէտներ, Մխիթարեան հայագէտներ, այլ մտաւորականներ ու մամուլի ներկայացուցիչներ եւ մանաւանդ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ ի դէմս Արամ Վեհափառի:

Հետեւաբար, դասական ուղղագրութեան վերահաստատման մասին այս քննարկուող նիւթը բազմիցս փաստարկուել է: Այդ փաստերը հանրայայտ են ու մեր յօդուածաշարում նոյնպէս օգտագործուած են, եւ մենք հեծանիւ չենք յայտնագործում: Պարզապէս, **նպատակ ունենք Հայաստանում առաւել տարածուն ու ընթերցուող մամուլի միջոցով լայն զանգուածներին տեղեակ պահել վիճայարոյց խնդրին, որովհետեւ վերը նշուած հեղինակների հրատարակած գրքերի փոքր տպաքանակը եւ բոլորին հասանելի չլինելը թելադրում է այդ բացը լրացնել մատչելի թերթերի միջոցով. *ինչը կարելոր է այս հիմնախնդրի առթիւ կողմնորոշում ունենալու համար***: Լրագրական էջերի սղութեան պատճառով եւ ժամանակի խնայողութեան նպատակով՝ յաճախ շարադրուած նիւթի մէջ չենք նշել օգտագործուած նիւթերի հեղինակներին, նրանց հրապարակումների անունումներն ու ժամկետները, էջերը, սակայն վերջում տրուած են այդ հրապարակումների ցանկը, ուր կարելի է գտնել այս նիւթին առնչուող եւ յայտնի շատ փաստարկումներ:

Նիւթի հետագայ բուն շարադրանքը կառուցուած է ըստ դասական ուղղագրութեանը վերադառնալու հիմնաւորումների, շեշտելով հետեւեալ կարեւոր գործոնները՝

Ա.- Հայերէնի գրահամակարգը պէտք է պահպանուի եւ սերունդներին անխաթար փոխանցուի՝ ինչպէս իր անանդական ազգային մշակոյթի զարգացման ու ազգապահպանման հարցերում, այնպէս *էլ համաշխարհային լեզուագիտութեան ասպարէզում ունեցած դերակատարումների համար*:

Բ.- Դասական գրահամակարգը «բարեփոխելը» լեզուական անհրաժեշտութիւն չէր, այդ «ռեֆորմը» ապագային էր:

Գ.- Աբեղեանական խեղագրութիւնը այսօր գոյութիւն չունեցող կոմունիստական երկրի բոլշեւիկեան պատուերն էր եւ **ունէր հեռագնայ քաղաքական նպատակներ**:

Դ.- Արձագանգներ, կարծիքներ եւ ուղղագրական վերլուծումներ:

Ա.--Հայոց ժառանգած գրաբանական համակարգի պահպանման կարեւորութիւնը

Աբեղեանական «բարեփոխումները», այն է՝ այբուբենից **օ, է և** գրերը դուրս նետելը, միաժամանակ **ու—եւ** շաղկապները նոր տառեր համարելը եւ համազգային համակարգուած աւանդական դասական միասնական ու միակերպ ուղղագրութիւնը փոխելը ոչ մի հարց չլուծեց, բայց առաջ բերեց բացասական հետեւանքների մի ամբողջ շարք: **Այդ խեղագրութիւնը չէր կարող այլեւս պահպանել հայերէնի կարեւորութիւնը միջազգային լեզուագիտական աշխարհի համեմատական լեզուաբանութեան բնագաւառում՝ հնդեւրոպական ճիւղի համար:** Համաշխարհային երեք կարեւոր լեզուաբնութանիքներից ամենախոշորը համարուող եւ Հայկական Լեոնաշխարհում սկիզբ առած հնդեւրոպական լեզուաճիւղը աշխարհի 81 երկրների լեզուական հիմքն է. այդ թւում լատինական կամ ռոմանական խումբից՝ ֆրանսերէնը, իսպաներէնը, իտալերէնը, անգլո-սաքսոն խմբից՝ գերմաներէնը եւ անգլերէնը, սլաւոնական խումբը, յունարէնը, պարսկերէնը, հնդկերէնը, աֆղանական ու քրդական լեզուները եւ այլն: Այդ լեզուներից միայն հայերէնն ու յունարէնն են, որ առանց խաչաձեւուելու այլ խմբերի հետ, ուղղաձիգ կերպով են հասել մինչեւ մեր օրերը: **Եւ քանի որ հայերէնը համարուում է հնդեւրոպական նախնական արմատների ու քերականական կառուցուածքի ամենահարազատ ձեւով պահպանուածը, հետեւաբար հայերէնը կարեւորում է որպէս վերը թուարկուած լեզուախմբերի համեմատական լեզուաբանութեան ուսումնասիրութեան հիմքի, ինչպէս նաեւ որպէս կարեւոր աղբիւրի՝ իրանագիտութեան, յունագիտութեան, ասորագիտութեան, արաբագիտութեան եւ կովկասագիտութեան համար:** Էական նշանակութիւն ունի նաեւ լեզուի մի այլ հատկանիշը՝ այն, որ **«պատմագիտութեան առաջին աղբիւրը լեզուն է»** (ակադ. Գր. Ղափանցեան), եւ դա վերաբերում է նաեւ հայերէնին:

Մեր պատմութեան օրհասական պահին, երբ երկիրը բաժանուած էր Պարսկաստանի ու Բիւզանդիայի միջեւ, երբ եկեղեցիներում պատարագը ասորերէն կամ յունարէն էր, **Մաշտոցի ստեղծած գրահամակարգի շնորհիւ մեր ազգը փրկուեց ձուլումից ու յարատեւեց:** Այսօր էլ համաշխարհայնացման դարաշրջանում առաւել եւս ահագնացող նժդեհանալը (հայրենագրկուելը) ստիպում է **դիմել պատմական փորձին՝ ազգովին փարուել մեր լեզուին ու նրա գրահամակարգին:** Դարերով անհայրենիք մեր ժողովուրդը սփռուեց աշխարհով մէկ, սակայն մնաց միասնական՝ շնորհիւ միակերպ դասական գրահամակարգի: Մաշտոցի աշակերտ, պատմիչ Կորիւնը վկայելով իր ուսուցչի վաստակը վրացիների համար գիր ու դպրութիւն ստեղծելու առթիւ, գրում է. **«Եւ այդ վրացիներին, որ այնքան առանձին եւ անջատ-անջատ լեզուներով էին խօսում, Մաշտոցը համախմբեց, վերածեց մէկ ազգի...»:** Ասել է թէ՛ **ընդհանրական գրահամակարգը ազգի միասնականացման նախապայմանն է:** Մինչդեռ այսօր երկու ուղղագրութեամբ մենք զատուած ենք միմեանցից: Մեր թշնամիները խլեցին մեզնից ամեն ինչ, նոյնիսկ հայրենիքը, բայց **չկարողացան խլել մեր լեզուն ու նրա գրահամակարգը:** Մա է մեր յարատեւման գաղտնիքը: Զկայ լեզուն՝ ուրեմն չկայ ազգը. Իսկ լեզուն յարատեւում է իր զարգացած գրահամակարգի շնորհիւ: Զարգացած է համարւում այբուբեն, կանոնարկուած քերականութիւն ու միասնական ուղղագրութիւն ունեցող գրական լեզուն: Բանաւոր լեզուն ապագայ

չունի: Հիւսիսային եւ Հարավային Ամերիկաների, Ավստրալիայի, տունդրայական ցեղախմբերի եւ նման այլ տարածքների բնիկների լեզուների փոխարեն այսօր հնչում են անգլերէնը, իսպաներէնը կամ մի այլ նուաճողի լեզուն: Ահա թէ ինչու մենք պէտք է հոգանք մեր 1600-ամեայ գրահամակարգի պահպանման գործը, այն գրահամակարգի, որով աշխարհին ներկայացել են մեր պատմագրութիւնն ու աստղագիտութիւնը, փիլիսոփայութիւնն ու բանաստեղծութիւնը, ողջ մշակոյթը: Դա նշանակում է, որ՝

-- Գիրք միայն հաղորդակցութեան միջոց չէ. դրան կարող էին բաւարարել նաեւ լսողական եւ խօսքի օրգանները: **Գիրք, աւանդական միասնական ուղղագրութիւնը պահպանելը կարելւոր է, որովհետեւ դա է կապել մեր ժողովրդի տարբեր ժամանակաշրջանները, տարբեր հատուածները, տարբեր սերունդները եւ ապահովել դրանց մշակոյթների ու հոգեւոր կապի, իմաստնութեան ու փորձի փոխանցումը. իսկ գիրք կարդալ՝ նշանակում է բառապատկերի յիշողութիւն գործադրել: Հետեւաբար՝ կարելւոր է այդ բառապատկերի տեսքը անխաթար պահելը, չփոխելը:**

--Աւանդական գրահամակարգը վերացնելով դժուարանում է **բառարմատների ծագման ստուգաբանական որոշումը.** «ի օգուտ» բառի «յօգուտ» դասական գրելաձեւը փոխելով խեղագրական «**հոգուտ**» ձեւի, ստացւում է մի նոր «**հոգ(ուտ)**» արմատ, որը կապ չունի «**օգ(ուտ)**» արմատի հետ եւ նմանւում է«**հոգ(ալ)**» արմատին:

--Խաթարուած բառապատկերով հնարաւոր չի լինում նաեւ **նոյնահունչ՝ բայց տարիմաստ բառերի տարբերակումը**, երբ կաթի սերը եւ մարդու սերը խեղագրութեամբ **գրւում են միեւնոյն ձեւով՝ սեր:**

Ահա թէ ինչու պարտականութիւն ունենք՝ պայքարել խեղաթիւրումների դէմ, ապահովել հայերէնի շարունակականութիւնը՝ արմատներից չկտրուելու պայմանով:

Այսպիսով մեր լեզուի ու նրա գրահամակարգի պահպանութիւնը ազգային եւ միջազգային շահերով է պարտադրուած, քանի որ, ինչպէս Պարոյր Մեւակն է ասում. «Մեր լեզուն միայն մեզ չի պատկանում,այլ աշխարհին, նա միայն մեր սրբութիւնը չէ, այլ մասունքը հանուր մարդկութեան...Այդ լեզուի խնամքը, նրա անաղարտութիւնն ու պաշտպանութիւնը դրուած է մեր վրայ» :

Բ.-Հայերէնի գրահամակարգը կարիք չունէր «բարեփոխումների»

Մեսրոպեան հիմքի վրայ կառուցուած դասական գրահամակարգը 1600 տարիներ անթերի ծառայելով թէ՛ մեր առաջին գրական լեզու գրաբարին, թէ՛ միջին հայերէնին, թէ՛ աշխարհաբար երկու գրական լեզուներին, ամբողջովին արդարացրել է իրեն: Մեսրոպեան այբուբենի միակ (արդարացուած) փոփոխութիւնը եղել է միջնադարում՝ **Օ-Ֆ** գրանշանների աւելացումը՝ առանց մի

ուրիշը կրճատելու: Մեսրոպեան դարաշրջանում **օ-հնչյունի** փոխարեն ունեցել ենք **աւ** երկհնչյունը, որտեղ **ւ-(վիւն)** գրանշանի հնչումը միջնադարում արդեն նմանուել է **վ-(վեւ)** հնչյունին: Այսօր էլ ասում ենք՝ **օրաւուր**, **յաւուր պատշաճի**, **քառսուն աւուր մանուկ** եւ այլն: Յետագայ դարերում այդ **աւ**-ը սկսել է արտասանուել յունարեն օմեգայի հնչումով՝ բաց **օ** (օր, օրական): Գրաբարում չենք ունեցել նաեւ **ֆ-(ֆե)** հնչոյթը. հայերը միշտ արտասանել են՝ **Փ-(փիւր)**. Այսօր էլ դեռ ասում ենք՝ **Քրիստոփոր** Կոլումբոս (**Քրիստոֆոր**), **փաղանգ** (**Ֆալանգա**), իսկ Սինիքում այսօր էլ ասում են **փայտոն-(ֆայտոն)** (գրել ենք հայաստանեան ուղղագրութեամբ), **փնտղ** (**ֆնտղ-պնդուկ**), **Ռափայել** Պատկանեան (**Ռաֆայել**), **փաստ** (այլ լեզուներում՝ **fact-ֆակտ**), **Փինիկ** (**Phenix**–Ֆենիքս), **Փիլիսոփայ** (**ֆիլոսոֆ**) եւ այլն: Այսպիսով, հնչյունային համակարգին համապատասխան **կատարելագործուած այբուբենը այլեւս կարիք չունէր «բարեփոխուելու»**, առաւել եւս՝ **նրանից գրանշաններ դուրս նետելու**: Միխիթարեան հայագէտ Գաբր. Մենէվիշեանը ընդվզելով այբուբենից երեք տառերի արեղեանական «արտաքսումի» եւ այդպիսով միանգամից ջնջուած ու արմատների նոյնացմամբ հազարաւոր բառերի չքացման առթիւ, գրում է. «Գրանշան մը իսկ պակսեցուցէք լեզուին մէջէն, պիտի ստիպուիք պակսեցնել շատ մը բառեր, բառերու ձեւեր, ձեւերու երանգներ, երանգներու նրբութիւններ, միով բանիւ փոխանակ զարգացնելու լեզուն, պիտի սպաննէք զայն»: Հարկ կայ՝, օրինակ, ապացուցելու, որ **գէտ** (գետափ) եւ **զէտ** (զիտուն, տգէտ) բառերը նոյնացնելով եւ միայն **զէտ** ձեւով գրելով պակասում են մեր բառարմատները: Կամ. վերացնելով այբուբենից «է» տառը, մեր բառարանից չքացաւ այդ մէկ տառանոց, բայց նաեւ սուրբ՝ «է» բառը՝ **է-ակ, է-ուրիւն, է-ական, ան-է-անալ, մանր-է** (մանր էակ, միկրոբ), որոնց փոխարեն 1922-1940 թ.թ. գրում էր արեղեանական **եյակ, եյական** եւ այլն: Իսկ թէ ինչ արժէք ունի մէկ բառարմատը, կարելի է եզրակացնել Գուրգէն Մեւակի հեղինակած եւ 40-ականների վերջերում լոյս տեսած «Ժամանակակից հայոց լեզուի պատմութիւն» գրքում բերուած փաստերից, ըստ որոնց՝ օրինակի համար «ձայն» արմատով ունենք 90 բառ, կամ «մարդ» արմատով՝ 180 բառ:

--Արեղեանական «բարեփոխումներին» լեզուագէտ Մենէվիշեանը մօտենում է հետեւեալ հարցադրումով. «**Ուղղագրական խնդիր կայ՝ հայերուն համար...եւ պիտի չքաշուէի «ոչ» մը պատասխանել**»: Նրա կարծիքով արեւելահայերէնը ամենեւին ուղղագրութեան խնդիր չունի՝ «Բացի յարուցողների չարդարացուած ցանկութիւնից, ու մանաւանդ, գրաբանական իրազեկային անտեղեակութիւնից»: Ըստ նրա՝ **«Խնդիրը ոչ թէ վաղեմի մատենագրութեան աւանդութեամբ նուիրականացուած գրապատկերների ճշդագրութեանն է վերաբերում, այլ՝ արտասանական-հնչոյթային հարցին»**, ինչն արդարացում եւ ներկայացում է, որպէս **«բերնի հնչման համապատասխան նշանագիր գտնել**»: Խօսքը Արեղեանի «տեսութեան» մասին է՝ որ ամէն հնչիւն պէտք է ունենայ իր նշանագիրը: Մինչդեռ, հենց Մաշտոցն է իր այբուբենը ստեղծել «հնչիւն-գիր» համապատասխանութեան սկզբունքով: Բնականաբար հասկանալի է Մենէվիշեանի զարմանքը՝ նման խնդիր յարուցելու առթիւ. «Վասն զի բնիկ հայաստանցին իւր ծածած օդին հետ, խմած ջրոյն հետ, կը ծծէ, կարծես, հայ հնչումներն ալ. թերեւս չճանչնայ անոնց համապատասխան նշանագրերը, բայց հնարաւոր չէ որ հնչումները շփոթէ

իրարու հետ»։ «Բնիկ հայաստանցու այս առաւելութիւնը կարող է զարմացնել անգամ «ուղղագրութեան բարեփոխումներով համակուած լեզուաբան-հնչիւնաբաններին», -աւելացնում է Լ. Խաչերեանը։ Հետագայ շարադրանքում մենք կը տեսնենք հնչականի հիման վրայ ուղղագրութիւն փոխելու աբեղեանական տեսութեան արդիւնքը, երբ, օրինակ, դասական «մէզ» (միզել) բառի գրելաձեւը փոխելով «մէզ»-ի, նոյնանում է «մէզ» դերանունի հետ։ Սա **Աբեղեանի քարոզած՝ լեզուի գրութեան հիմքը հնչական դրութիւնը համարելու տեսութեան արդիւնքն է**, ինչին, ցաւօք, հետեւում են նաեւ այսօր որոշ լեզուաբաններ։ Սակայն նրանք անտեսում են, որ **բանաւոր խօսքը ժամանակի ընթացքում միշտ փոփոխում է**, ինչը բնական է եւ յատուկ է բոլոր լեզուներին, **հետեւաբար ըստ այդ տեսութեան, ուղղագրութիւնն էլ պէտք է փոփոխել՝ հնչականին համեմատ**։ Այդ դէպքում մէկ-երկու սերունդ յետոյ՝ յաջորդները չպիտի կարողանան կարդալ նախորդ սերունդի գրածը։

-- Խախտելով **հայերէնի՝ ստուգաբանական հիմքի վրայ կառուցուած համակարգը**, ինչը յատուկ է հնագոյն մատենագիտութիւն ունեցող ազգերին, **Աբեղեանը առաջարկում է նոր զարգացող, նոր-նոր միայն գրահամակարգ ու գրականութիւն ստեղծող ազգերին յատուկ հնչական գրահամակարգին անցնել։ Գիտականօրէն դա բացառում է։**

-- Համոզուելու համար, թէ հայոց գրահամակարգը՝ այբուբենը, ուղղագրութիւնը կամ քերականական այլ կանոնարկումները «բարեփոխումների» կարիքը չունեն, ծանօթանանք մի քանի հեղինակաւոր գիտնականների կարծիքներին.

Մակուարտը՝ գերմանացի հայագէտ եւ հնդեւրոպական լեզուների մասնագէտը, համեմատելով մաշտոցեան գրահամակարգը այլ ազգերի համակարգերի հետ, գրում է. «Եթէ նրա (Մաշտոցի) գործը համեմատենք Պիպինի ու նրա զինակից Վիլֆրիդի գործունէութեան հետ, այս վերջինները թզուկներ կ'երեւան համեմատութեամբ այդ մտքի հսկայի»։

Մէլեն, ֆրանսիացի բազմալեզուագէտ հայագէտը, «ինչումն է այս տագնապը» հարցումին ի պատասխան զգուշացնում է Աբեղեանին, գրելով, թէ **«Բարեփոխման մէջ ես աւելի վտանգ եմ տեսնում, քան օգտակարութիւն»** եւ աւելացնում է. «...Ազգը պիտի հաշուի առնի, որ **1500 տարուց աւելի է, ինչ հայերէնը գրում է։** Հաշուի պիտի առնել աւանդականը...» եւ գտնելով, որ բարեփոխումի կարիք չկայ, շարունակում է. « Յայտնի է, որ այբուբենը գլուխ-գործոց մըն է, հայ հնչիւնաբանօրէն նշանով մը նոթագրուած է **եւ դրոյթը այնքան լաւ հաստատուած է, որ հայ ազգին հայթայթած է հնչիւնաբանօրէն վերջնական արտայայտութիւն մը, արտայայտութիւն՝ որ պահպանուած է մինչեւ այսօր, առանց փոփոխութիւն մը կրելու**, առանց բարելաւում մը ստանալու կամ պէտք ունենալու, վասնզի սկիզբէն իսկ անիկա կատարեալ է...»։

Ն. Մառը իրեն ներկայացուած 11 փոփոխութիւնների մասին կարծիք յայտնելով, գրում է. «Եթէ արեւելահայ գրական լեզուի աւանդական ուղղագրութիւնը հնչականի վերածելու լինեն՝ ընդառաջ գնալով Աբեղեանին...այդ դէպքում ոչ թէ առաջարկուած 11 փոփոխութիւններով, այլեւ 111

փոփոխություններով էլ հնարաւոր չի լինի սահմանափակուել... կը քանդուի կը գնայ աւանդական ուղղագրութիւնը: Իսկ եթէ... պիտի շարունակել նրա մինչեւ այժմ յաջող կիրառութիւնը եւ ծառայութիւնը նաեւ արեւալահայերէն գրական լեզուին, ապա թողնելու է նոյնութեամբ, ոչ մի փոփոխութիւն պէտք չէ կատարել»:

Ն. Ադունցը գտնում է, որ հայոց համակարգուած միասնական եւ միակերպ ուղղագրութիւնը «իր հասակակիցների մէջ սակաւաթիւ գրական լեզուներից է, որ արմատական փոփոխությունների կարիք ունենայ»: Յիշեցնենք, որ ըստ վկայութիւնների, առաջին անգամ գրի առնուող հայոց կենդանի լեզուն իր ուղղագրութեամբ եւ ուղղախօսութեամբ միանգամայն ներդաշնակ էր՝ բացարձակ համապատասխանութեամբ: Այստեղ արժէ նշել, թէ, նոյնիսկ միջնադարում, երբ գրաբարը դադարեց խօսակցական լեզու լինելուց եւ ուղղախօսութիւնն ու ուղղագրութիւնը արդէն չէին համապատասխանում իրար, մեր մշակոյթի յետագայ ներկայացուցիչները «շքարեփոխեցին» հայոց ուղղագրութիւնը: Նոյնիսկ ինքը՝ Արեղեանը իր «Բարեփոխումից» մի քանի տարի առաջ իր յօդուեանական զեկոյցի մէջ շեշտել է, որ «միանգամայն ընդմիշտ պիտի հրաժարուել ուղղագրութեան մէջ հիմնական փոփոխություններ անցկացնելու ծայրայեղ մտքից»: Եւ դա ճիշտ էր, որովհետեւ Մաշտոցը այբուբենի հետ մեզ ժառանգեց նաեւ իր իսկ սահմանած կանոնները՝ որպէս հիմք՝ հայագիր մատենագիտութեան: Եւ մատենաները գրուել են այդ կանոնների համաձայն, չհաշուած որոշ թերուս գրիչների վրիպակները: Եւ որպէս պատասխան բանասիրական գիտ. դոկտ. Բեդիրեանի այն պնդմանը, թէ՛ Մաշտոցը միայն այբուբենն է ստեղծել, ոչ ուղղագրութիւնը, նաեւ ի ամփոփումն հայերէնի համար բարեփոխումների կարիքը չլինելու մասին այս թեմայի, ներկայացնում ենք ակադ. Արարատ Ղարիբեանի եզրակացութիւնը. «Մեսրոպը բազմակողմանիօրէն նկատի է ունեցել մեր լեզուի արտասանական առանձնայատկութիւնները եւ բացառիկ ճշդութեամբ կարողացել է որոշել տառերից իւրաքանչիւրի գործածութեան կանոնները՝ հասնելով...գիտութեան արդի մակարդակի...բայց Մաշտոցը միայն հնչիւնաբան չի եղել, նա եղել է իր ժամանակի մեծագոյն լեզուաբանը...որ խորապէս ուսումնասիրել է մեր լեզուի քերականական կառուցուածքը եւ ուղղագրական կանոնները որոշելիս հիմնուել է քերականական տուեալների վրայ»:

Կարծում ենք, որ վերոյիշեալ հռչակաւոր գիտնականների կողմից մերժուած արեղեանասեւակեան «բարեփոխումներից» կառչելը անհիմն է գիտական տեսակէտից եւ ապագային սեփական արմատներից կտրուելու հեռանկարով:

Գ.- Արեղեանական խեղագրութեան քաղաքական հիմքը

Նախորդիւ փաստարկեցինք դասական ուղղագրութեան վերականգնման անհրաժեշտութիւնը՝ մեկնելով երկու գործօններից՝ դասական գրահամակարգի պահպանման կարեւորագոյն նպատակադրումից եւ այդ գրահամակարգի «բարեփոխումն» կարիքը չլինելու իրողութիւնից::

Այժմ անդրադառնանք դասականի վերականգնման անհրաժեշտութեանը՝ ելնելով «բարեփոխման» պարտադրանքի քաղաքական հիմքի վերացման փաստից:

Սակայն մինչ այդ ներկայացնենք լեզուական հարցերի քաղաքականացման կարելությունը:

Լեզուական քաղաքականությունը կարելություն է ազգային անվտանգության ու ազգապահպանական եւ պետության կայացման խնդիրների լուծման տեսանկյունից: 1918-20թ.թ. Առաջին Հանրապետությունը շատ լաւ գիտակցելով դա, կայացրեց իմաստուն որոշում՝ եւ որպէս առաջնակարգ խնդիր **ծրագրեց հայացնել** նախկին ռուսական նահանգի հիմքի վրայ նորաստեղծ երկիրը՝ վերից-վար, սկսած պետական հիմնարկների գրազրութիւնից ու հայերէնին տիրապետողներին միայն պաշտօնների նշանակելուց մինչեւ հասարակական ու մասնաւոր հաստատութիւնների, նաեւ կենցաղային գործառնութիւնները, միաժամանակ մշակելով ու հրապարակելով լեզուի մասին օրենքը: Լեզուաքաղաքական հարցերը լաւ էին օգտագործում գաղութարարները՝ իրենց լեզուն դարձնելով տուեալ գաղութի պաշտօնական լեզուն, որպէս մերձեցման ու ձուլման, նաեւ իրենց պետական- քաղաքական ծրագրերի իրականացման գործիք: Պատահական չէր, որ առաջին համաշխարհային պատերազմից դուրս եկած եւ սոցիալիզմ կառուցող երկրի՝ նոր Ռուսաստանի առաջին ամսուայ հրովարտակները (Լենինեան դէկրետները) վերաբերում էին խաղաղութեանը, հողին եւ լեզուին: Այսինքն, **Լենինը լեզուական խնդիրը պետականութեան կայացման առաջնահերթութիւն նկատեց:** Լեզուի լենինեան դէկրետի հարկադրանքով պէտք է լեզուական «բարեփոխումներ» իրականացնէին նաեւ Ռուսաստանին ենթակայ միւս ազգերը: Մոսկուայի նպատակը այդ ժամանակաշրջանում համաշխարհային յեղափոխութիւն իրականացնելն էր եւ ծրագրում էին այդ ազգերի գրահամակարգը փոխարինել լատինական գրերով: Իսկ երբ այդ յեղափոխութիւնը գլուխ չեկաւ, փոխարէնը սկսեցին հետապնդել հպատակ ազգերի ռուսականացման ծրագրի իրականացումը: Լենինեան-բոլշեւիկեան լեզուական դէկրետի էութիւնը հասկանալու համար բաւական է միայն ծանօթանալ գրող-հրապարակախօս Կարէն Ա. Սիմոնեանի հրապարակած «Կրեմլի յոյժ գաղտնի փաստաթղթերից մի քանիսը» գրքոյկին (Երեւան 2007): Ներկայացնենք այդ գրքոյկում վերլուծուած լեզուական «բարեփոխումների» մի քանի շեշտադրումներ, համոզուելու համար, որ այդ **կոմունիստական «բարեփոխումների» պարտադրանքը հեռուն գնացող քաղաքական ստոր եւ ապազգային մութ նպատակներ էր հետապնդում եւ ոչ թէ լեզուական անհրաժեշտութիւն էր**, ինչպէս կարծում են նաեւ այսօր դասական ուղղագրութեանը դէմ որոշ հայ լեզուաբաններ եւ նրանց հեղինակութիւն համարող իշխանաւորները: Նրանք, ի միջի այլոց, ցայսօր չեն կարողանում համոզիչ պատասխան տալ բանաստեղծ Լեւոն Միրիջանեանի հարցադրմանը, թէ ինչպէս՝ կարող էր **Խորհրդային Հայաստանում ուղղագրական հարցերում, «պակասութիւնները» շտկելու, փոխելու «խիստ անհրաժեշտ» լեզուաբանական կարիքի հետ** (ընդ որում այդ կարիքը, չգիտես ինչու, սփիւռքում չկար) **միաժամանակ, յանկարծ նոյն «կարիքը զգացին»** նաեւ **խորհրդային միւս ժողովուրդները:** Բացի համաշխարհային յեղափոխութեան համար «այդքան կարելոր» լատինականացումից (որի դէպքում հնարաւոր չէր մեր դ,խ,ձ,ծ,ց, ճ,կ,պ,տ, եւ այլ տառեր գրելը եւ առաջարկուում էր նաեւ այբուբենից կրճատել որոշ նման

բաղաձայններ), լեզուական դեկրետի միւս նպատակները բացայայտուեցին յաջորդ՝
«Անգրագիտութեան վերացման մասին» դեկրետի հրապարակումով: Դրա
նպատակն էր **ստեղծել նոր տեսակի ազգ՝ սոցիալիստական ազգ եւ պէտք էր
դաստիարակել նոր մտածողութեամբ քաղաքացի**, որովհետեւ նախկին **գրագէտ
մարդը** կարող էր հաղորդակից լինել իր ազգային ու համամարդկային մշակոյթին,
ինչը **անյարիր էր դասակարգային մտածողութեան մշակոյթով մարդ
դաստիարակելու ծրագրին**: Լենինեան գաղափարը կայանում էր գրագէտ մարդուն
կտրել իր անցեալի ու արմատների հոգեւոր մշակոյթից եւ բնակչութեանը դարձնել
լոկ «գրաճանաչ» միայն այնքանով, որ խորհրդային մարդը կարողանայ տեղեակ
լինել բոլշեւիկեան քաղաքականութեանը:

Նշուած դեկրետի նպատակը հաստատուեց նաեւ կուսակցութեան
քաղաքական բիւրոյի անդամ Ն. Բուխարինի ելոյթից՝ արտասանուած 1925թ.
մտաւորականների հաւաքի ժամանակ. **«...Մտաւորականներին մենք կը
բազմացնենք կադապարներով, նրանց կ'արտադրենք գործարանային եղանակով»**:
Ահա, այս նպատակով էր կատարուում այբուբենի եւ ուղղագրութեան «պարզեցումը»
(իմա՝ խեղաթիւրումը): Կոմունիստների հռչակած՝ «ազգային լեզուի, մշակոյթի
զարգացման, ծաղկման» վերջնական նպատակը յստակ ձեւակերպուեց Ստալինի՝
«Լենինիզմի հարցերը» գրքում. **«Ձեռով ազգային, բովանդակութեամբ
սոցիալիստական ու մէկ ընդհանուր լեզուով մշակոյթի մէջ է յատկապէս ազգային
մշակոյթի լենինեան հարցադրումի դիալեկտիկականութիւնը... Ազգային
մշակոյթների (ու լեզուների) բուռն ծաղկումը մէկ երկրի մէջ նպատակ ունի ստեղծել
դրանք ոչնչացնելու եւ ձուլելու մէկ ընդհանուր սոցիալիստական մշակոյթի (ու
լեզուի) մէջ...»**: Եւս երկու ապացոյց ռուսական մամուլից. **«...Լեզուաշինարարական
խնդիրները կենսագործելու համար անհրաժեշտ է Սովետական Միութեան մէջ
միասնականացնել բոլոր այբուբենները»** («Ռեւոլուցիա ի պիսմեննոստ» թերթից):
«Սովետական ստորիտելստվո» թերթը տալիս է մի ընդարձակ պարզաբանում.
**«Դասակարգային պայքարի մէջ լեզուն օգտագործուում է յանուն իշխանութեան,
տեղական նացիոնալիզմը ձգտում է ազգային լեզուները ուղղորդել բորժուական ու
կուլակային ճանապարհով... Լեզուն... գործածուելու է պլանաւորուած»**: Սա
նշանակում է, որ ազգի, ժողովրդի լեզուի զարգացումը կամ կիրառումը կախուած է
իշխանութեան կամքից՝ վերածուելով **«Պետական լեզուի»**: 1933թ. նոր այբուբենի
համամիութենական կենտրոնի գիտխորհրդի պլենումը՝ **«վճռականօրէն մերժեց
ուղղագրութեան պատմական ասանդական սկզբունքը»**՝ ազգը իր արմատներից ու
անցեալից զրկելու համար: Խորհուրդը որոշեց նաեւ հաստատել այնպիսի կարգ,
ըստ որի, այդուհետեւ **բոլոր այբուբենները, ուղղագրական տեղեկութիւնները,
տերմինաբանական բառարաններն ու քերականական ամէն մի փոփոխութիւն
ընդունելի կը լինեն ոչ այլ կերպ, քան միայն Սովետ Միութեան կենտրոնական
գործադիր կոմիտէի ազգութիւնների խորհրդի նախագահութեան յատուկ որոշումով**
(յոյժ գաղտնի 6-րդ փաստաթուղթ): Այդ շրջանում արդէն գործում էին
«տերմինաբանական կոմիտէները»՝ միջազգային (իմա՝ ռուսական) տերմիններին
գործադրման պետական պաշտպանութիւն ապահովելու համար: Այսօր մենք

հասկանում ենք, որ այդպիսի մարմինը պետք է ծառայի միայն ազգային լեզուական մշակույթի պահպանմանը:

Ռուս մտաւորականութիւնը թշնամաբար վերաբերուեց այս դեկրետային «Բարեփոխումներին», համարելով այն «դասարանի վերջին շարքերում նստած ծոյլ անբաններին փրկելու ռեֆորմ»: Նոբելեան մրցանակի դափնեկիր Ի. Բունինը գրել է. «Տգէտ գեաղան հրապարակել է խելքին փչած «ցանկապատային» ուղղագրութիւն, եւ հնազանդելով պետք է գրել, ինչպէս լակոտներն են գրում պատերի վրայ...»:

Փիլիսոփայ, Մոսկուայի համալսարանի փրոֆ. Ի. Իլյինը գրել է «Գլագոլ»ում. «Ուրիշ էլ ինչ՞ ենք անելու մեր լեզուի դէմ, որպէս զի մատչելի լինի բթամիտներին». նրա կարծիքով նոր ուղղագրութիւնը պետք է չեղեալ յայտարարել եւ փոխարինել այն ուղղագրութեամբ, որ ռուս ժողովուրդը կրել է իր ծոցում Կիրիլի (Կիրիլի) եւ Մեթոդիոսի (Մեֆոդիի) ժամանակներից ի վեր: Եւ դա կը լինի **ոչ թէ**

«հակազդեցութիւն» (մեզանում նոյնպէս դասականի պահանջատիրութիւնը որակում են եղածին հակազդեցութիւն), **այլ լեզուի առողջութեան, իմաստի եւ գեղարուեստականութեան վերականգնում**: Այսօր եւս պայքար կայ այդպիսի «Բարեփոխումներին» դէմ. 1994թ. «Իստոչնիկ»ում Վ. Դենիսովը համարում է, որ «լեզուական աւանդութիւնը կացնահարելու նպատակը հետագայ սերունդների կողմից ռուսական բազմադարեան մշակութային ու գրաւոր ժառանգութիւնը իւրացնելու դժուարութիւն ստեղծելն է, ազգը իր արմատներից ու անցեալից զրկելը»:

Աւելացնենք, որ Կարէն Ա. Սիմոնեանի գրքոյկում բերուած վեց փաստաթղթերն էլ ունեն «յոյժ գաղտնի» յղումը՝ ըստ հնարավորին ժողովրդից ստորաբար թաքցնելու այն, ինչը ուղղուած է այդ ժողովրդին այլասերելուն, քաղաքական ու մշակութային ուժացումին:

Բնականաբար այս «մշակութային յեղափոխութեան» ուղիով պիտի անցնէին նաեւ հայ բոլշեիկները:

Իսկ ինչպէս՞ էր իրավիճակը հայ իրականութեան մէջ:

Հայաստանում լենինեան դեկրետի առաջին ներդրողները եղան նախկինում լուսժողկոմ (լուսաւորութեան նախարար) եւ ապա կենտկոմի քարտուղար դարձած Աշոտ Յովհաննիսեանը, Մոսկուայից հրաւիրուած ու նոր լուսժողկոմ նշանակուած Պօղոս Մակինցեանը եւ գրականագէտ Մանուկ Աբեղեանը, ում «լեզուագիտական գագաթնակէտը» խեղագրական ռեֆորմն էր՝ Մաշտոցին հաւասարուելու մարմաջով: Լուսժողկոմ Ա. Յովհաննիսեանի առաջարկով ուղղագրական ռեֆորմը, ինչի համար ստեղծուած էր յանձնաժողով, մշակեց եւ ներկայացրեց Աբեղեանը: Ինչպէս վկայում է Աբեղեանը, Յովհաննիսեանը «հաճեց ռեֆորմի խնդիրը կառավարութեան առաջ ամբողջութեամբ ներկայացնել՝ կանգնած լինելով այն տեսակէտի վրայ, որ **եթէ ռեֆորմ է լինելու, պետք չէ բաւականանալ չնչին փոփոխութիւններով**»: Հետագայում Աբեղեանը պիտի խոստովանէր նաեւ, որ որոշումը կայացել էր միայն իր նախագծի հիման վրայ, առանց հաշուի առնելու յանձնաժողովին, առանց մտաւորականութեան հաւանութիւնը ստանալու կամ համաժողովրդական քննարկման դնելու: Մա սպասելի էր, որովհետեւ Աբեղեանի

«Առաջնորդ հայոց լեզուի նոր ուղղագրութեան» անունով գրքոյկին կցուած էր լուսժողկոմի յանձնարարականը. «Լուսաւորութեան նպատակի եւ կիրարկման միջոցների տեսակէտից **ուղղագրութեան հարցը քաղաքական հարց է եւ հայ լեզուի ուղղագրական ռեֆորմի խնդիրը քննութեան չի դրում սկզբունքի տեսակէտից...**»: Թերեւս մեր օրերի «լուսաւորութեան ժողկոմները» եւ լեզուաբանները նոյնպէս այս ազգադաւ ռեֆորմին չեն անդրադառնում մեզ անյայտ՝ իրե՛նց «սկզբունքի տեսակէտից», շարունակելով ժողովրդին ու իշխանութիւններին համոզել, թէ 1922-40թ.թ. «բարեփոխումներով» արեղեանասեւակեան ներկայ ուղղագրութիւնը եղել է յանուն մեր լեզուի զարգացման եւ բխել է «լեզուագիտական անհրաժեշտութիւնների» թելադրանքով: Մի փոքր շեղուելով ասենք, որ լեզուի «պետական-դէկրետային» մտածողութիւնը, որ ունենք մինչեւ այսօր, հասել է այն աստիճանին, որ վերջերս (անցեալ օգոստոսին) հանրային առաջին հեռուստաալիքով, մեր կողմից շատ յարգուած եւ մեր լեզուի մաքրութեանը նախանձախնդիր գիտնականը իր իրօ՛ք հետաքրքիր ու օգտակար հաղորդաշարում **հնարաւոր համարեց « մայրենի լեզու» արտայայտութեան փոխարէն գործածել «պետական լեզու» արտայայտաձեւը**, քանի որ ունենք քաղաքական իշխանութիւն, պետութիւն: Մենք արդէն վերը տեսանք **ազգի, ժողովրդի սեփականութիւն հանդիսացող լեզուն լենինեան դէկրետով ինչպէս դարձաւ պետական լեզու** եւ ի տարբերութիւն այլ երկրների՝ **«պաշտօնական լեզու»** արտայայտութիւնը փոխարինուել է **«պետական լեզու»-ով**: Մեզ մնում է յիշեցնել, որ դարերով ունեցել ենք պետականութիւն կամ թագաւորութիւններ եւ միշտ ասուել է **մայրենի լեզու, եւ ոչ թէ՛ պետական լեզու**, որովհետեւ կայ նաեւ պետականի հակառակը՝ **ժողովրդի սեփականը**. Պետական կարող է լինել գոյք, գործարան, դպրոց, հաստատութիւն կամ կազմակերպութիւն, բայց ոչ լեզուն կամ գրահամակարգը. ի՞նչ կարիք կայ շարունակել բոլշեիկեան մտածելակերպը եւ այն ժամանակուայ լեզուական գաղափարախօսութիւնը: Անկախութիւնը նաեւ այստեղից պիտի սկսուէր:

Վերադառնալով արեղեանասեւակեան խեղագրութեան մէջտեղ գալուն, յիշենք Արեղեանի խոստովանութիւնը, թէ. **«1500 տարուայ հնութիւն ունեցող մի ուղղագրութիւն փոխելու համար միշտ չի լինի հարմար ժամանակ, իսկ 1922-ը հենց այդպիսի հազուադէպ վայրկեաններից մէկն է»** եւ ապա. **«Ուրեմն մի այնպիսի շրջանում, երբ ուղղագրութեան անզգալի փոփոխութիւնները մեզ չեն գոհացնում, պահանջ ենք զգում աւելի մեծ փոփոխութիւնների»**: Իրականում այդ «աւելի մեծ փոփոխութիւնների» հետեւանքով անգրագէտին գրագէտ դարձնելու փոխարէն գրագէտն էր դառնում անգրագէտ: Իսկ ընդամենը գրաճանաչ դարձածը, միեւնոյնն է, իր կիսատ-պոատ գիտելիքներով մնալու էր անգրագէտ: Որպէս ապացոյց, օգտագործենք Արեղեանի մի այլ անկեղծ խոստովանութիւնը, որ **իւր հնչական դրութիւնը նախատեսուած է անգրագէտների համար, իսկ գրագէտները հիմնական խոչընդոտն են դրա ընդունմանը**, ուստի իրենք (գրագէտները) մոռացութեան պիտի տան իրենց գիտցածը ու հաւասարուեն անգրագէտների հետ, որի համար, ըստ իրեն, ժամանակ է պէտք: Պատասխանելով Մալխասեանցի քննադատութեանը, Արեղեանը բացատրում է, որ. «Նախ չափահաս հայերէն գրողը դէն պիտի դնել: Այդպիսի մէկը վարժուած է հայերէն կարդալու եւ գրելու... Եթէ մենք չափահաս

գրողներին նկատի ունենանք, ուղղագրութեան մէջ ոչ մի ռեֆորմ չպիտի մտցնենք»։ Այսինքն, **Աբեղեանի ռեֆորմի նպատակը կամ ելակէտը հայերէն չիմացող անգրագէտ սերունդն է, որպէս զի ստիպուած չլինի «Յանձն առնելու ուղղագրութիւն սովորելու համար գործադրել անպէտք եւ ապարդիւն աշխատանք եւ ժամավաճառ լինել»։** Աւելին. Նա դեռ 1913-ին բացայայտել է իր վաղեմի «Բարի» ցանկութիւնը՝ փրկել ձուլումից ռուսահայերին։ Սակայն ինչ՞ գնով. **«Ռուսաստանում ապրող հայ հասարակութեան ձուլման փաստի վտանգը նկատի ունենալով, հայերէնի գրագիտութեան մակարդակը հասցնել (իմա՝ իջեցնել) ռուսախօս անգրագէտների դիրամատչելիութեանը»** -ասում է Աբեղեանը։ Այսինքն **«ապրող անգրագէտների» համար ընդունելի ուղղագրութիւն հիմնել։** Որքան էլ զարմանալի է, նա յոյս ուներ, որ «...10-15 տարի յետոյ Հայաստանի սահմաններից դուրս էլ աւանդական ուղղագրութեամբ նախապաշարուածները ստիպուած կը լինեն հետզհետէ տեղի տալու ապագայ սերունդի առաջ... որին ոչ մի կերպ չեն կարող ստիպել, որ նորից յանձն առնի ուղղագրութիւն սովորելու համար գործադրել ապարդիւն աշխատանք ու ժամավաճառութիւն»։ Ահա թէ ինչպիսի ուղղագրութիւն է պէտք ստեղծել, որի սովորելը աշխատանք ու «ժամավաճառութիւն» չպահանջի։ Պարզուում է, որ **արեւելահայ այս նոր խեղագրութիւնը սովորելու համար ժամանակ պէտք չէ** (ուրեմն դա գիտութիւն չէ, եթէ այդքան հեշտ է) **եւ այդ «առաւելութիւնը» պէտք է տարածել նաեւ սփիւռքի վրայ։** Բացի այդ, Աբեղեանը իր ռեֆորմը արդարացնում է նաեւ իր մի այլ «Բարի նպատակով», որը **տնտեսական բնոյթ ունէր։** Նա մտահոգուած է եղել, որ մեր տառերը երկար պոչեր ունեն, շատ թուղթ ու թանաք է ծախսուում, որ ուրիշ լեզուներ 24 տառ ունեն (լատիններէնը), իսկ «Մեր երեխաները պէտք է սովորեն 38 տառ, աւելի ժամանակ պիտի գործի դնեն եւ աւելի ծախք պիտի անենք մայր տառեր (մատրիցա) շինելու ու տառեր ձուլելու համար»։ Իրականում պարզուել է, որ խեղագրութեան ներդրումից յետոյ ծախսերը աւելացել են 3%-ով. դա բնական է, որովհետեւ դասականով *«որքան»*-ը գրուել է՝ խեղագրական *«վորքան»*, նոյն ձեւով՝ *-էի-էյի, երեկ-յերեկ՝* եւայլն։ Նաեւ յայտնի է, որ Լուսժողովոմ Մակինցեանի համար նոյնպէս մեր այբուբենը պահելու բան չէր եւ ձգտում էր՝ **«Որքան հնարաւոր է շուտ արխիւ նետել Սահակ-Մեսրոպեան տգեղ, անկլինաւոր ու աչքի համար վտանգաւոր այբուբենը»։**

Հետաքրքրական է Աբեղեանի այն տրամաբանութիւնը, թէ հին ուղղագրութեան կողքին նորի (իր ստեղծածի) առկայութիւնը դրական է այն իմաստով, որ գրաւորի մէջ այլեւս սխալներ չեն լինի, որովհետեւ մի ուղղագրութեամբ գրուածի «սխալը» ճիշտ կը լինի միւս ուղղագրութեամբ։ Դեկրետային ուղղագրութեան ընձեռնած «ազատութեան» լաւագոյն եւ տիպական օրինակ կարելի է համարել «Ընկեր» շաբաթաթերթի խմբագրի ձեւակերպումը՝ «գրիւր այնպէս, ինչպէս խօսում ես»։ Ըստ այդ խմբագրի, պէտք է **«հրաժարուել ռամիկ ժողովրդին դժուար մատչելի գրական լեզուից եւ փոխարենը ստեղծել «ռամկաբար լեզու»**--այսինքն բարբառային լեզուն (այն էլ բարբառաշատ մեր երկրում)։

Ինչպէս տեսնում ենք, դեկրետային լեզուի **չափանիշ է դառնում անգրագէտ ռամիկը, ինչպէս նաեւ գիտութիւն սովորելուց ծուլացողի, հեշտ ուսուցելու համար**

ծոյլ մանկավարժի եւ կիսագրագէտ խմբագրի ցանկութիւնները: Եւ այս բոլորը Աբեղեանը մատնանշում է որպէս իր կատարած գործի արդարացում:

Աբեղեանի հակասականութիւնը

Ահրաժեշտ է նշել, որ նախքան լենինեան լեզուական դեկրետային առաջադրանքների կատարման յանձնառութիւնը, Աբեղեանը նախկինում ունեցել է որոշ առաջարկներ, որոնք եղել են սրբագրական կարգի կարծիքներ, բայց ոչ արմատական յեղաշրջող ռեֆորմի մակարդակի: Եւ ընդհանրապէս հնչել են կարծիքներ՝ տարբեր ժամանակներում ու տարբեր անձանց կողմից, այդ թւում են նաեւ յայտնի դէմքերի՝ Ղազարոս Աղայեանի, Նիկոլայ Ադոնցի, Նահապետ Ռուսինեանի («կիլիկիա» երգի հեղինակը), Ստեփան Մալխասեանցի կողմից: Նիւթը չծանրաբեռնելու համար միայն նշենք, որ Աղայեանը առաջարկում էր Վ-գրանշանը լրիւ հանել եւ գրել միայն ւ-ով (կով- կու, ծով- ծու), այդ սկզբունքով կազմուած նրա դասագիրքը, սակայն, կաթողիկոսի հրամանով արգելուեց: Ադոնցը առաջարկում էր ու-ն փոխարինել -ւ-ով (գրուած- գրւած, զինուոր-զինւոր), Ռուսինեանը առաջարկում էր գաղտնավանկ ք-ն գրել (քսկքսել) եւ բառամիջում Ե-ն փոխարինել Է-ով (որբէր,գրէցի), Մալխասեանցը ւ-ն առաջարկում էր փոխարինել վ-ով (հաւ-հավ): Հետագայում, սակայն, Մալխասեանցը եւ Ադոնցը քննադատեցին Աբեղեանին եւ պաշտպանեցին դասական ուղղագրութիւնը:

Այնուամենայնիւ, **վերոյիշեալ առաջարկութիւնները երբեք ընդհանրական ճանաչում չեն գտել, չեն ընդունուել ազգի եւ նրա մտաւորականութեան կողմից:**

Մինչեւ ռեֆորմը, Աբեղեանը ընդունում էր միակերպ ուղղագրութեան կարեւորութիւնը. «Ուզենք թէ չուզենք, բայց դա մի պատրաստի ընդհանուր գործիք է , որ կարելի չէ մի կողմ դնել...Ուստի **ստիպուած ենք կապուած մնալու բառերի հին գծագրութիւններին...**» եւ ապա. «Իսկ մի անգամից հիմնովին նորոգելու համար ոչ մի հնարաւորութիւն չկայ, ոչ թէ նրա համար, որ լեզուագիտութիւնը անգոր է այդ անելու, այլ **որովհետեւ մէկմէկու գրածը հեշտութեամբ չեն հասկանալ, քանի որ բառերի պատկերները մեծ փոփոխութեան կ'ենթարկուեն...**» : Նա ընդունել է աշխարհում ընդունուած ընդհանուր գրաբանական տեսութեան հիմնահարցը՝ **աւանդական եւ անադարտ պահուած գրահամակարգը փոխելու անթոյլատրելիութիւնը.** «Եթէ ուզում ենք գրական լեզու ունենալ, արեւելեան աշխարհաբար իմացողի համար հասկանալի պիտի լինի արեւմտեան աշխարհաբարը եւ հակառակը... **ուղղագրութեան միասնութիւնն էլ ընդհանրական պայման է** , այլապէս բաբելոնեան խառնակութիւն կ'ունենանք...**պէտք է գերադասենք հին աւանդական ուղղագրութիւնը...որ յամենայն դէպս լաւագոյնն է:** Այստեղ նա շատ իրաւացի է, շարունակելով. « Շատ անգամ յայտնուած ճշմարտութիւն է, որ **աշխարհաբարը չէր կարող այնպէս արագ զարգանալ, եթէ չլիներ գրաբարը, գրաբարի ուղղագրութիւնը եւ ճշմարտօրէն պէտք է ընդունել ...մեր**

երկու աշխարհաբարները այնքան հեռու կը լինէին իրարուց, որ կը կարդային, բայց դժուար կը հասկանային»։ Այսօր մենք այդ վիճակում ենք՝ սփիւռքի արեւմտահայերը չեն հասկանում հայրենի արեւելահայերի գրածը եւ հակառակը, եւ դա չի անհանգստացնում հայրենիքի պատասխանատուներին։ **Հաւանաբար ընդհանրական ուղղագրութիւն ունենալու այս գործօնը խիստ էական է մեզ համար, որ դեռ մէկ դար առաջ Աբեղեանը ստիպուած էր ընդունել. «Եթէ չլինի, ուրեմն, ուղղագրական այս ընդհանուր եւ տեւական միութիւնը, չի կարող գոյութիւն ունենայ եւ գրական լեզու։** Հայերէնի համար աւելի՛ մեծ է այս պայմանի նշանակութիւնը, քանի որ **ունենք այսօր երկու գրական լեզուներ, որոնք նոյնանում են գոնէ միակերպ ուղղագրութեամբ»։** Ցաւօք, հայրենի իրաւասու անձինք այսօր չեն ուզում ընդունել մեր երկու գրական լեզուների մերձեցման համար միակերպ դասական ուղղագրութեան վերահաստատումը։ Անկախ իր յետագայ դէկրետային գործունէութիւնից, Աբեղեանը գոնէ այդ ժամանակ (1913թ) ազնւութիւն ունեցաւ գրութեան հնչական դրութեան՝ իր քարոզած տեսութեան սխալը ընդունել (որի դէպքում արտասանութեան փոփոխութեան հետեւանքով ուղղագրութիւնները անընդհատ պիտի փոփոխուէին), գիտակցելով, որ. **«Իր առաջարկները ընդունելի կը լինէին, եթէ չլինէր միակերպ ուղղագրութեան հիմնական սկզբունքը, պահանջը ...խօսքը թոշում է, գիրը մնում է. մեր նախնիների արտասանութիւնը անհետացել է, բայց նրանց արտասանած բառերի պատկերները մնացել են... Լեզուի հնչիւնները մշտական բազմազան փոփոխութիւնների մէջ են, բայց բառերի թանձրացած պատկերները չեն կարող փոփոխութիւնների մէջ լինել։ Հետեւաբար, եթէ որեւէ փոփոխութիւն մեր ուղղագրութեան մէջ աւելի խառն գրութիւն մտցնի եւ մեր գրական լեզուները իրարուց աւելի հեռացնի, աւելի լաւ է, որ չլինի»։**

Եւ վերջապէս, Աբեղեանը չի ժխտում, որ ուղղագրութեան ուսուցման հարցերում առկայ դժուարութիւնները չեն կարող պատճառ լինել ուղղագրութիւնը «պարզեցնելու» կամ փոխելու համար, վկայակոչելով դժուար համարուող եւրոպական լեզուները. «Մեծ ազգերը, ինչպիսիք են ֆրանսիացիները, գերմանացիները կամ անգլիացիները **հարկադրանքի տակ չեն իրենց աւանդական ուղղագրութիւնից հրաժարուելու՝ ...ինչքան դժուար էլ լինի դրանց ուսուցումը...**», եւ ապա. «ֆրանսիացիք չեն կարող մի օրում փոխել այն ուղղագրութիւնը, որ մանկութիւնից սովորել են մեծ ջանքերով՝ եւ գործածել»։

Գրաբանական տեսութեանը համապատասխան այս միանգամայն ճիշտ դատողութիւնները, սակայն, յօդս ցնդեցին հետագայում, երբ լեզուի դէկրետի քաղաքական պարտադրանքը պայմաններ ստեղծեց Աբեղեանի համար՝ յեղաշրջիչ փոփոխութիւնների դիմելու իր վաղեմի երազանքը կատարելու, ինչը իրականացնելուն խանգարում էին «ապրող գրագէտները» եւ լեզուական գրահամակարգային միջազգայնօրէն ընդունուած չափանիշները։ Այժմ նա արդարացնում էր իր ռեֆորմը՝ անգրագէտի մակարդակին ուղղագրութիւն համապատասխանեցրած լինելու հանգամանքով։ Վերջապէս հնչական համակարգով ուղղագրութեան կարկատաններ դնելու անհնարիւնութիւնը փոխհատուցուեց ուղղագրական օրէնքների զրոյացումով արմատական փոփոխութիւնների հնարաւորութեամբ։ Նա նաեւ **արդարացի էր համարում հայերի**

ուղղագրութեան նկատմամբ անել այն, ինչը ըստ իրեն, եւրոպական ազգերի դէպքում չի կարելի, որովհետեւ հիմա արդէն հնարել է արդարացում՝ հայ գրագէտների քանակը քիչ է, Ֆրասիայում գրագէտները շատ են. Սա էլ մի նոր, քանակական տեսութիւն էր լեզուական խնդիրներում: Պարզապէս լեզուի բոլշեւիկեան դեկրետների ձեռքը չէր կարող հասնել մեծ ազգերին:

Խեղագրութիւնը մասնակիօրէն տապալուեց 1940-ին՝ գուրգէնսեւակեան որոշ սրբագրումներով. սակայն մինչ այդ, արդէն խեղագրութիւնը քննադատուել ու վարկաբեկուել էր ոչ միայն հայրենի եւ սփիւռքի մտաւորականների շրջանում, այլեւ խեղագրութեան հովանաւորողների շրջանակում:

Ետխեղագրական խոստովանութիւններ

Ուղղագրութեան՝ չափից աւելի այլանդակումը եւ խեղագրութեան շուրջը բարձրացած դժգոհութիւնների ալիքը պատճառ դարձան մի քանի անգամներ նոր յանձնաժողովներ ստեղծելուն, մտաւորականութեան նոր ներկայացուցիչների ընդգրկելուն: 1926թ ստեղծուած հերթական յանձնաժողովը ապարդիւն էր անցել: 1932թ լուսժողկոմը երկու անգամ եւս ռեֆորմի «փրկութեան» յանձնաժողով է ստեղծում, որին սակայն Աբեղեանը հրաժարուում է մասնակցել՝ վիրաւորուելով, որ մասնակիօրէն դէպի դասականին վերադառնալու արմատական միտումներ են նկատուել, մանաւանդ Գուրգէն Սեւակի կողմից (այսօր կը գտնուի՝ յաջորդ երկրորդ Գուրգէն Սեւակ): Իսկ ընդհանրապէս 1922-32 թ.թ. նիստերի որոշումները երբեք չեն գործադրուել, չնայած այնտեղ ընդգրկուել էին մեծանուն լեզուաբաններ ու մտաւորականներ: Վերջիններս, հասկանալով այդ տարիներին դասականը փրկելու անհնարիւթիւնը, ձգտում էին գոնէ շտկել առաւել արտառոց փոփոխութիւնները, ընտրել չարեաց փոքրագոյնը: Այս վերջին հանգամանքը մեր օրերում դարձել է մատի փաթաթան «ապացուցելու» համար, թէ խեղագրութեանը մասնակցել եւ համաձայն են եղել մեր նշանաւոր լեզուաբանները կամ մտաւորականները: Նշենք, որ այդ նիստերին ներկայ են եղել նաեւ պետական գործիչներ:

Խեղագրական ռեֆորմի սխալ լինելը ընդունեցին նոյնիսկ այդ ռեֆորմի հեղինակներն ու հովանաւորները, խոստովանելով այդ «նոր ուղղագրութեան» բերած վնասներն ու դրանց անընդունելի լինելը ժողովրդի ու մտաւորականութեան կողմից: Վերջինների արձագանգի մասին՝ մի փոքր աւելի ուշ, իսկ այժմ, մի քանի օրինակներ խեղագրութեան հեղինակների ինքնախոստովանութիւններից:

Պարզուում է, որ լուսժողկոմ Պօղոս Մակինցեանը համաձայն է եղել նոր «ուղղագրութեանը» ոչ թէ դա համարելով լեզուաբանական տեսակէտից աւելի կատարեալ, այլ համաշխարհային յեղափոխութեան իր բոլշեւիկեան համոզմունքներին յագուրդ տալու համար. «Ես ոչ մի ձայն չէի տալ ի նպաստ այդ ռեֆորմի, եթէ նրան չհամարէի մի աստիճան՝ դէպի լատինական գիրը անցնելու

գործը դիրացնելու համար» (սա մի անգամ եւս ցոյց է տալիս, թէ՛ **որքան կարեւոր էր անխնայ խեղել դասականը, որ մոռացուէր որպէս այդպիսին եւ չխանգարէր լատիններէնին անցնելուն**): Եւ ապա շարունակում է. «Եթէ չէր իրականանալու լատինական գրերին անցնելը, ապա **աւելի լաւ կը լինէր առանց այլեւայլի դառնալ հին ուղղագրութեանը**»: Կարելի է մտածել, թէ հաւանաբար մերօրեայ մտաւորականները՝ (չնչին բացառութեամբ) նոյնպէս լատին գրերի կողմնակից են, որ չեն պայքարում խեղագրութեան հետեւանքները պահպանելու դէմ՝ դասականին անցնելու համար: Իսկ ժողովրդի վերաբերմունքի մասին կարելի է դատել լուսժողկոմի հետեւեալ խոստովանութիւնից. «Պէտք է նկատել, որ նաեւ Խորհրդային երկրում (այսինքն ոչ միայն Հայաստանում, այլեւ միւս դրկից կամ հեռու հանրապետութիւններում ուր ապրում են հայեր—Ն. Ո.) այս հարցի նկատմամբ համերաշխութիւն չկայ... **շատ կան այնպիսիները, որոնք ոչ միայն համաձայն չեն նոր ուղղագրութեանը, այլեւ շարունակում են գրել հին ուղղագրութեամբ**: Այս բոլորը մեզ ստիպում է այդ **հարցը նորից քննութեան ենթարկել, որ ինչպէս յայտնի է, լուծուեց կիսկատար կերպով**»: Իսկ ահա այսօր դասական ուղղագրութեան կողմնակիցների ահագանգը, որ ներկայ ուղղագրութիւնը բաժանում է մեզ սփիւռքից, լաւագոյնս երեւում է Մակինցեանի հետեւեալ խոստովանութիւնից. «Մենք կատարելապէս **համոզուեցինք, որ ընդունուած ռեֆորմը մեզ խզեց, անջատեց արտասահմանի հայկական տարրերից** (ժողովրդին տարր է համարում-Ն.Ո.): Մեր ընկերները հաղորդում են, որ **մեր խորհրդային հրատարակութիւնները չեն տարածում ուղղագրութեան պատճառով**: **Հէնց այս մի հանգամանքն այնքան ծանրակշիռ է, որ հարկադրում է նոր ուղղագրութիւնը վերացնելու մէջտեղից**, որովհետեւ պարզուեց, որ յօգուտ այս ուղղագրութեան մեր արած ողջ պրոպագանդան վիժեց»: Այսօր մենք շարունակում ենք նոյն խորհրդային ուղղագրութիւնը (փոքրիկ շտկումներով) ու այսօր էլ «արտասահմանի հայկական «տարրերը»» նոյնպէս չեն կարողում մեր ուղղագրութեամբ: Նախկին լուսժողկոմը քաջութիւն ունեցաւ յայտարարելու այդ «ծանրակշիռ հանգամանքի» պատճառով «վերացնել մէջտեղից» այդ ուղղագրութիւնը: Իսկ մեր ներկայ լուսժողկոմ- կը նախարարը չի՞ կարծում, որ մէկ ազգ, մէկ մշակոյթ հոչակած պետական վարդապետութիւնը (դոկտրինան) մեզ եւս հարկադրում է վերացնել միակերպ դասական գրելաձեւի երկփեղկման շարունակական գործելակերպը, մանաւանդ որ ուսանելի ուղեցոյց է նախկին լուսժողկոմի այն եզրայանգումը, թէ. «Մեր տօնը (ՀԽՍՀ-ի 4-րդ տարեդարձը) ամենեւին մթազնած չենք լինի, խոստովանելով անյաջողութիւնը ուղղագրական ռեֆորմի: Իսկ **եթէ Արեւելանի ուղղագրութիւնը ընդունուել է յաւիտեանս ժամանակաց, սա կը լինէր բացարձակ յետադիմութիւն**: Նրա ուղղագրութիւնը այնքան է այլանդակել հայերէն բառերի պատկերը, որ շատերն արդէն երկու եւ կէս տարի մի միայն այս ուղղագրութիւնը կարդալով հանդերձ չեն կարողացել նրան **ընտելանալ**»: Եւ մենք արդէն ընտելացել ենք այդ «բացարձակ յետադիմութիւն» համարուող եւ «**հայերէնի բառապատկերը այլանդակող**» ուղղագրութեանը, նաեւ աղճատուած այբուբենին՝ «**յաւիտեանս ժամանակով**»:

Հայ մտաւորականութեան արձագանգը խեղագրութեան առթիւ

Հայ մտաւորականութիւնը թե՛ սփիւռքում, թե՛ հայրենիքում ընդվզեց ուղղագրական աղաւաղումների առթիւ: **Անկախութիւնից յետոյ ի՞նչն է խանգարում մեզ հրաժարուելու գոյութիւն չունեցող երկրի (ԽՍՀՄ) լեզուական գաղափարախօսութիւնից ու օրէնքներից՝ վերականգնելու համար ընդամենը ութ տասնամեակ առաջ խեղաթիւրուած մէկ ու կէս հազարամեայ աւանդական միակերպ գրահամակարգը (մնացած բոլոր իրաւա- քրէական խորհրդային օրէնքները վերացուած են): Արդեօ՞ք համագգային ուղղագրութիւնը իսկապէս սեփականաշնորհել են մի քանիսը, որոնք տնօրինում են լեզուական կալուածը, երբ որ պետութիւնն իսկ այդ իրաւունքը չունի:** Ներկայիս հայրենի մտաւորականութիւնը լրում է: Ափսո՛ս: Իսկ ահա իսկական մտաւորականների արձագանգները:

---**Ամենայն հայոց բանաստեղծ Յովհ.Թումանեանը** Հայաստանի լուսծողկոմին հասցէագրած նամակում գրում է. «Ես, որպէս հայ գրող եւ գրողների միութեան նախագահ, գալիս եմ յայտնելու իմ զարմանքը եւ բողոքելու են վարմունքի դէմ, որ ունեցել է Հայաստանի լուսծողկոմատը եւ կարելոր խնդրում: Պ.Մ.Աբեղեանը մի առաջարկ է արել ու դրել հրապարակ: Շատ լաւ: Բայց լուսծողկոմը որտեղի՞ց է իմացել, թէ պ.Մակինցեանը եւ ինքը, լուսծողկոմն էլ նրա հետ միասին, անսխալական են, որ առանց քննութեան ենթարկելու առաջարկը, հրամանագրում է ընդունել եւ միայն դրանով գրել ու տպագրել: Պ. Աբեղեանի առաջարկը ընդունելի է թէ չէ, դա դեռ քննելիք խնդիր է: **Երբ քննելիք խնդիր է, լուսծողկոմին մնում է ուղղել իր արած սխալը, ետ վերցնել իր կարգադրութիւնը, խնդիրը համարել բաց եւ դնել քննութեան»:** Իսկ ի՞նչ է մտածում Գրողների Միութեան ներկայիս նախագահը՝ իր մեծ նախորդի, այս օրերի յոբելեարի (ծննդեան 140-ամեակը) պահանջին արձագանգելու մասին: Զե՞ որ **մի հատուածի գրական լեզուի համար նոր ուղղագրութիւն իրականացնելը՝ ի հեճուկս միւս հատուածի, առանձին ազգակերտման գաղտնի նպատակների իրականացում է եւ յանգեցնելու է հատուածների խորթացման ու ազգապառակտման:**

--**Աւ. Իսահակեանը** Մ. Սարեանին յղած նամակում գրում է. «...Ամէն բան լաւ է գնում Հայաստանում (թերթերը կարդում եմ) միայն մի բան է գեշ-ուղղագրութիւնը, աշխատեցէք փոխել»: Եկէք աշխատենք:

Այդ ուղղագրութիւնը մերժեց նաեւ Վրաստանի մեծաթիւ հայ մտաւորականութիւնը: Կենտկոմի քարտուղար Ա. Յովհաննիսեանը յատուկ նամակով դիմել էր Վրաստանի լուսծողկոմին՝ հայկական դպրոցներում ուղղագրութիւնը փոխելու մասին, որի պատասխանը աւելի քան մէկ տարի ձգձգում էր՝ հարցը հայ մտաւորականների հետ քննարկելու պատճառաբանութեամբ:

--Պոլսում կազմակերպուած քննարկման ժամանակ առաջինը քննադատեց **Երուանդ Օտեանը**: Իսկ հայագետ **Վարդան Հացունին** արձագանգեց այսպէս. «Ուղղագրութիւն փոխողը կրնայ ուրեմն, եթէ ուզէ, լեզուն ալ փոխել կամ նոր լեզու մը ստեղծել: Մեր այդ յարգելի կոմիսարները մոռցած էին, թէ լեզուն պետութեան մը ստացուածքը չէ, այլ հասարակութեան եւ թէ այն կերտելու կամ փոխելու իրաւունքը բնութենէն տրուած է ազգերու եւ ժամանակին, ոչ անհատներու... Բառերու մեծ խումբ մը կը ջնջուէր նոր ուղղագրութեամբ:... Հայ ուղղագրութենէն զատ մեր լեզուի բառարանին ռեֆորմն ալ վճռուած էր...»:

--**Մանկավարժ եւ Էջմիածնի Ճեմարանի տեսուչ Ս. Մանդինեանը** գրում է. «Ես մերժում եմ ամբողջ ուղղագրութիւնը փոփոխութեանց խնդիր դարձնել: Դա ոչ միայն անժամանակ է, այլեւ **անհնարին**»:

--**Ն. Ադունցը** շեշտում է խեղագրութեան մի քանի սխալները: **«Ինչ որ խտրոց է հնի ու նորի մէջ՝ խոտելի է»**, նա դրանով նկատել է տալիս, որ «ամէն մի ռեֆորմ միակերպութեան ու հնչական հաւատարմութեան հետ նաեւ հաշուի պիտի առնի լեզուապատմական պահանջը՝, ինչպէս նաեւ **գրական լեզուի կապը գրաբարի ու աշխարհաբարի հետ, որպէս սնման ու զարգացման աղբիւր**, հարցեր, որոնք անտեսուել են խեղագրութիւնում »: Այնուհետեւ. **«Հայ գրական աշխարհի երկփեղկումը խեղագրութեան պատճառով աւելի մեծ աղէտ է, քան այդ ուղղագրութեան խոստացած բարիքը... Պետութիւնը եւս իր հեղինակութիւնը անխոց պահելու համար ձեռնպահ պիտի մնայ վաղաժամ միջամտութիւնից»:** Եւ ապա. **«խորապէս ցաւալի է, եթէ այն պահին, երբ հայրենիքն իր կառավարչական եւ հասարակական ուժերով ջանալու է իրեն քաջել աշխարհահալած զաւակները (նկատի ունի քսանականներին կազմակերպուող ներգաղթը-Ն.Ո.), ուղղագրութեան խնդիրը նոր անջրպետ հանդիսանար եւ փոխանակ մերձեցնելու երկու գրական լեզուները, ուղղագրական սեպով ընդլայնէր եղած պատակտումը»:** Սա մի կարելոր ուղերձ է մերօրեայ իշխանութիւններին:

--Այս իմաստով հետաքրքրական է 1980-ականներին բուհերի համար կազմուած դասագրքի մէջ գրուածը, որի համահեղինակներից է դասական ուղղագրութեանը ընդիմացող՝ ակադ. **Գ. Զահուկեանը**: Ահա այն. «Արեղեանի այս բարեփոխութիւն կոչուած ուղղագրութիւնը առանց որեւէ քննութեան ընդունուեց եւ գործածութեան մէջ դրուեց՝ հակառակ ողջ հայ մտաւորականութեան բողոքին: Արեւմտահայութիւնը, պարսկահայերը եւ գաղութների ողջ մշակութային հաստատութիւնները մերժեցին այդ «բարեփոխութիւնը». այդ պարտադիր դարձուեց միայն Սովետական Միութեան սահմաններում:

--**Հր. Աճառեանը** ամենաբացասականը համարել է «հայերէն բառապատկերների անճանաչելի դարձնելը» եւ այն, որ. «Արեղեանը ձգտել է ամէն կերպ մոռացնել տալ հայերէն հին բառապատկերները, լուրջ վտանգ ստեղծելով մեր դարաւոր մեծահարուստ գրականութիւնը կորսնցնելու, ի չիք դարձնելու. բայց վասն ինչի՞, ով՞ է ստիպում մեզ»: Աւելացնենք նաեւ, որ Աճառեանը իր «Արմատական բառարան»ը չհրատարակեց միայն այն պատճառով, որ չտպագրեն «նոր ուղղագրութեամբ», որով հնարաւոր չէր ցոյց տալ բառարմատների ծագումը:

--**Ստ. Մալխասեանցը**, ով ժամանակին վ-գրութեան եւ «մէկ հնչիւնին մէկ գիր» սկզբունքի ջատագովն էր, ետ էր կանգնել իր որդեգրած սկզբունքից, քննադատել էր Աբեղեանին, որովհետեւ . «Մարսափեց նոր ուղղագրութեան այն աւերածութիւնից, որ համատարած խեղաթիւրելու էր արեւելահայ գրական լեզուի բառապատկերների տեսքը»: Նա նոյնպէս իր «Բացատրական բառարան»ը չհամաձայնեց տպագրել «նոր ուղղագրութեամբ», որովհետեւ «անասելի խառնաշփոթութիւն առաջ կը գար այդ ուղղագրութեամբ», «քանի որ այս բառերը ոչ մի անգամ այս ձեւով չեն գրուել եւ ոչ էլ այսուհետեւ կը գրուեն»: Նրա բառարանը թոյլատրուեց տպագրել դասական ուղղագրութեամբ միայն գիրքը Ստալինին ձօնելուց յետոյ:

--**Մխիթարեան հայագիտական կենտրոնի լեզուագէտ Գ. Մենէվիշեանը** գրում է. «մինչեւ հոս պիտի հասնի եղեր յանդգնութիւնը, որ թշնամոյն չըրածը մեր ձեռքով պիտի կատարենք եղեր... Այսպիսի ուղղագրական հաստատուն կանոնի մը դէմ մեղանչելով **ագատ դուռ կը բացուի ուզողն ուզածն ընելու**»:

Ալ. Շիրվանզադէն գրել է. «Տգեղ բան կը լինի Սահակի եւ Մեսրոպի տօնը կատարելու համար ժողովուել (Էջմիածնի ժողովի մասին է-Ն.Ո.) եւ նոյն Սահակի ու Մեսրոպի շինած սքանչելի տաճարը քանդել...»:

--**Ն. Մառը** պահանջում է, որ. «Մաշտոցեան համակարգային միակերպ ու միասնական ուղղագրութիւնը կիրառելու պարագային բացառել ամէն կարգի ուղղագրական փոփոխութիւններ եւ, աւելին՝ փոփոխութիւններն էլ նորից նախկիններով փոխարինել...**Ուղղագրութիւնը անփոփոխ թողնելու տեսակէտն է միակ ճիշդ եզրայանգումը**»:

--**Պ. Մեւակը**՝ սփիւռքի մտաւորական, ուղղագրութեան հարցերով յօդուածներ գրող Յակոբ Գրիգորին ուղղուած նամակում գրում է. «...Առիթ բաց չեմ թողնում ասելու, որ մեր **սխալաշատ գործունէութեան մէջ ամենամեծ սխալը, Մեւանա լճից էլ աւելի վտանգաւոր քայլը, եղել է մեր ուղղագրութեան «Բարեփոխումը»...Ես խոստանում եմ Ձեզ՝ գլխաւորել այդ շարժումը**»: Առիթից օգտուելով հերքենք բ.գ.դ. Բեդիրեանի այն կարծիքը, թէ իբր Պարոյր Մեւակը դէմ է եղել դասականին, ասելով, թէ՛ ուղղագրութիւնը որբի գլուխ չէ, որ ամէն մարդ դալլաքութիւն անի: Թերեւս դա վերաբերել է նախորդ ուղղագրական խաղերին: Այդ է վկայում Մեւակի նամակի մեջբերումը:

Արամ Ա Վեհափառ—Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ. «Մեսրոպեան ուղղագրութեան վերականգնումը կը նկատենք հրամայական անհրաժեշտութիւն թէ՛ մեր ժողովրդի միասնականութիւնը ամբողջացնելու եւ թէ՛ մեր մեսրոպեան լեզուն աւելի բիրեղացնելու իմաստով: Կը հաւատանք, որ նաեւ ա՛յս է ողջ սփիւռքին մօտեցումը այս խիստ հրամայական հարցին: Հետեւաբար վստահ ենք, որ հայրենի պետութիւնն ու մտաւորականութիւնը յատուկ նախանձախնդրութեամբ պիտի քննեն այս խնդիրը»:

Գրիգորիս արքեպիսկոպոս Պալաքեան--Երոպայի հայոց կաթողիկոսական պատրիարք. «Հայ լեզուի եւ ուղղագրութեան աղաւաղումն նոյնպէս մեծ խրամատ մը բացած է ընդմէջ հայ բոլոր գաղութներու եւ մայր հայրենիքին: Ազգերու կեանքին

մէջ պետական «տրկրեյթներով» (հրովարտականերով) ցարդ լեզու չէ շինուած եւ չի կրնար շինուիլ»:

Միմոն Հովհանէս—լիբանանահայ պատմաբան եւ հասարակական գործիչ.
«Այս խնդիրը հիմնականօրէն ազգային հարց է: Այստեղ կայ ազգային միասնականութեան խնդիր... Լեզուաբանները դեր մը չունին այս հարցին մէջ:...Պետութեան ձայնն է, որ պիտի իշխէ: Եւ յատկապէս նախագահն է, որ իբրեւ հայ ազգի գլուխը՝ պիտի ըլլայ վճռական եւ պետական հրովարտակով ազգին զանազան հատուածները միացնէ՝ եւ միասնական դարձնէ բոլորը, իբրեւ մի ամբողջութիւն-մէկ ազգ»:

Մարկ Նշանեան—ԱՄՆ-ի Կոլումբիա համալսարանի հայագիտական ամբիոնի նախկին վարիչ. «Սփիւռքի հայերը եւ Հայաստանի հայերը գրեթէ երկու տարբեր ժողովուրդներ են... երկու տարբեր լեզուահասկացողութեամբ»:

Հիլտա Գալֆայեան-Փանոսեան—Փարիզի Սորբոնի համալսարանի դոկտ.փրոֆ. լեզուագէտ, բանաստեղծ. «Նոր ուղղագրութիւնը լեցուն է հակասական եւ անտրամաբանական օրէնքներով ու կանոններով...Գրաւոր լեզուն ժողովրդի մը անձնագիրն է, որով երկու տարբեր ուղղագրութիւնները երկու տարբեր ազգերու կը վերածեն մեզ»:

Կարէն Ա. Միմոնեան—Գրող-հրապարակախօս. «Ազգային ուղղագրութիւնը վերահաստատելու պահանջը միայն լեզուական խնդիր չէ, այլ ունի քաղաքական խորք: Խորհրդային «ուղղագրութիւնը» հայերէնը ընդհանուր լեզուի մէջ ձուլելու առաջին քայլն էր, հետեւաբար՝ կոմունիստական բռնատիրութեան մէջ իրականացուած մշակութային ցեղասպանութիւնը հաստատող ապացոյց»:

Լեւոն Խաչերեան—Մատենադարանի գիտական աշխատող,դոկտ.փրոֆ
«...Ազգերի ուղղագրութեան պատմութեան մէջ նախադէպը չի եղել, որ երկու գրական լեզուների առկայութեան պայմաններում մի գրական լեզուն որդեգրի անկախաբար առանձին ուղղագրութիւն՝ ի հեճուկս ազգի միւս գրական լեզուի ...Իսկ շարունակել պահպանել հայրենի երկրնոյթ ուղղագրութիւնների աննորմալ ու անբնական վիճակը ա'յն վտանգաւոր եւ ազգակործան ճանապարհն է տանում, որ վերջում անխուսափելիօրէն կը կազմաւորեն երկու ազգեր՝ երկու տարբեր ուղղագրութիւններով...Պատմութիւնը մեզ չի ների բնաւ»:

Գէորգ արք. Զեորեքչեան –Կաթողիկոսական տեղապահ, յետագային Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ. (նամակ)

Մոսկուա, Լաւրենտի Բերիային

«Հայկական ուղղագրութեան մէջ, որ կիրառուում է մեզ մօտ (Խորհրդային Հայաստանում), կան մի շարք էական տարբերութիւններ...Դրա հետեւանքով արտասահմանի հայութիւնը մեծ դժուարութիւնների է հանդիպում՝ իրեն հասած խորհրդային գրականութիւնն ընթերցելիս, իսկ ոմանք ընդհանրապէս անկարող են կարդալ: Տեղին եւ նպատակայարմար եմ համարում Միութենական Կառավարութեան միջոցով ԽՍՀՄ Գիտութիւնների Ակադեմիային եւ Հայկական կազմակերպութիւններին առաջադրել միասնական հայկական ուղղագրութեան ստեղծման հարցը, եթէ պահանջուի՝ արտասահմանեան մասնագէտների ներգրաւմամբ»:

Ս. Գիւլբուղադեանը, Պետական Համալսարանի դասախօս եւ ուղղագրութեան պատմութեան մասին արժէքաւոր գիրք գրողը, ով ձգտում էր միջին լուծում գտնել դասականի եւ արդի ուղղագրութիւնների միջեւ, եւս ընդունում էր, որ «Այսօրուայ ուղղագրութեան ամենախոցելի կողմը երկփեղկութիւնն է, ոչ միասնական ուղղագրութիւնը»: Տեղին է այստեղ օգտուել Լ. Խաչերեանի վկայութիւններից, ցոյց տալու համար երկփեղկութեան, երկու ուղղագրութեան գոյութեան հետեւանքը: Ակադեմիայի լեզուի ինստիտուտի պատասխանատու աշխատողներից մէկը (անունը յայտնի է, սակայն չենք նշում), իր թեզի պաշտպանութեան համար ցանկանալով «ապացուցել», թէ Սովետական շրջանում հայերէնում բազմաթիւ բառեր են ստեղծուել, ներկայացրել է՝ հախուռն, հագուրդ, համառ, հաղթանակ, հարգի, հարմար, հուշ, հիշատակ, հաճախ, հանցանք, հեղհեղուկ բառերը, որոնք նա չի յատնաբերել Հայկազեան Բառարանում՝ Հ-տառի տակ: Լեզուի այդ դիպլոմաւոր «մասնագետը» չի իմացել այդ հնաւանդ բառերի գոյութիւնը՝ դասական **Յ**-ուղղագրութեամբ եւ դրանք փնտրել է այսօրուայ ուղղագրութեամբ: Իսկ ահա մի ուրիշ դէպքում, մանրանկարչութեան պատմութեան ապագայ մասնագետը յղում է կատարում «Քիվըրտեանի» գրքից: Այս դէպքում էլ **ւ**-գրութեան չիմացութեամբ «Քիւրտեան» (հնչւում է՝ Քիւրտեան) ազգանունն է աղաւաղուել:

Համոզուելու համար վերոյիշեալ արձագանգների ու գնահատականների իրաւացիութեանը, ստորեւ անդրադառնանք դասական ուղղագրութեան եւ խեղագրութեան տարբերութիւններին:

Ինչու՞ մն էր կայանում արեղեանական խեղագրութիւնը եւ ի՞նչ ենք ժառանգել դրանից այսօրուայ հայաստանեան ուղղագրութեան մէջ

Ինչպէս արդէն գիտենք, խեղագրութեան նկատմամբ մտաւորականութեան մերժողական դիրքը եւ բողոքները ստիպեցին կառավարութեանը՝ մեղմել կամ ինչ-որ ձեւով «փրկել» դրութիւնը, ստեղծելով զանազան նոր յանձնաժողովներ՝ թէ՛ քսանական, թէ՛ երեսունական թուականներին, որոնց ընդունած որոշումները սակայն, երբեք չգործադրուեցին՝ մինչեւ 1940թ. երկրորդ՝ (գուրգէնսեւակեան) ռեֆորմը: Ինչպէս յիշում ենք, յանձնաժողովներում ներգրաւուած լեզուաբանները եւ միւս մտաւորականները, գիտենալով **ամբողջովին դասականին վերադառնալու անհնարինութիւնը տուեալ քաղաքական մթնոլորտում, փորձում էին ընտրել չարեաց փոքրագոյնը**: Այդ հարցում աւելի համարձակօրէն գործող Գուրգէն Սեւակի **սրբագրած տարբերակը, այնուամենայնիւ , կէսկատար էր, ինչը մնաց ցայսօր որպէս գործող ուղղագրութիւն**: Փորձենք ցոյց տալ այդ երկու «ուղղագրութիւնների» որոշ տարբերութիւնները դասականից:

Աբեղեանը առաջին հերթին **այբուբենից դուրս նետեց է, օ, ւ գրանշանները** : Դրանցից վերջինը՝ **Ի-ւ**(վին կամ հին,մենք կը գործածենք **վին** անունը,որ յաճախ Հայաստանում ասում են փոքր «վ») այդպես էլ **Գ. Սեւակը չվերականգնեց այբուբենում**: Բացայայտենք այդ գրանշանների գործածման կանոնները ըստ երկու ուղղագրութիւնների՝ դասականի ու խեղագրութեան:

Վ-ւ (տառերի անուանումը՝ վել - վին)

Դասականով՝ **վ**-ն գրում է **միայն** բառակզբում եւ պահպանում է այդ բառարմատի կրկնման կամ բառային փոխակերպութիւնների ժամանակ. **վազել, վազվզել** (վազ-վազ-ել), **արագավազ**: Մնացած բոլոր դէպքերում՝ բառամիջում եւ բառավերջում, գրում է **ւ**(վին). **աւետել, բաւական, ցաւ, բացի ո**-տառից յետոյ, այլապէս կը դառնայ **«ու»** շաղկապ:

Խեղագրութեան մէջ **ւ**-ն վերացուեց եւ ամենուրեք գրուեց **վ**-ն: Սակայն **այբուբենում գոյութիւն չունեցող ւ-ն գործածում է**: Սա խեղագրութեան անտրամաբանութիւններից մէկն է, որովհետեւ այդ **ւ**-ն դրուելով **ո**-ի(վո) կողքին ստացվում է՝ **ու**- շաղկապը, **ե**-ի կողքին՝ **սղուած եւ** շաղկապը, այդ դէպքում ինչու՞ հանուեց այբուբենից, իսկ Սեւակը՝ չվերականգնեց այդ **ւ**-ն, պահպանելով աբեղեանական սխալը: Այդ տառը դասականում դրուելով **ի**- տառի կողքին ստացւում է **իւ**-(որը հնչւում է **իու** ձեւով): Աբեղեանը **իւ**-ն դարձրեց **յու**, ինչպէս օրինակ՝ **արիւն**- արյուն: Դրանով առաջանում է արտասանական դժուարութիւն. փորձէք **յ**-ն մաքուր հնչել (ինչպէս՝ սայլ, քայլ, գայլ բառերում) հետեւեալ խեղագրուած բառերում. (փակագծերում՝ դասական գրելաձեւը) **սյուն** (սին), **ձյուն** (ձին), **հյութ** (հիւթ), **գյուղ** (գիւղ), **հնչյուն** (հնչիւն), **դյուրին** (դիւրին), **Հյուզո** (Հիւզո): Որպէս զի **յ**-ն **լսելի արտաբերէք**, ստիպուած էք ասել՝ **սըյուն, ձըյուն, հըյութ, գըյուղ, դըյուրին, Հըյուզո** եւայլն: Այդ կանոնով **իւ**- վերջածանցը դարձաւ՝ **յուն**. **միութիւն-միություն** , **բարութիւն-բարություն**: Մինչդեռ դասականով **իւ** (իու) արտասանելը աւելի դիւրին է սիւն, ձիւն, հիւթ, գիւղ, հնչիւն, դիւրին, բարութիւն, Հիւզո (Ֆրանսիացիք **յ** չեն հնչում այդ անուան մէջ, սա նման է Ֆրանսիա ասելու փոխարէն ասել՝ Ֆրանսյա): Նկատենք, որ **ւ**-ն Մաշտոցի ժամանակ, ըստ **Լ. Խաչերեանի**, ունեցել է անգլերէնի **w** հնչիւնը, իսկ հայերէնում ժամանակի ընթացքում **ւ-w**-ն նմանուել է **վ**-ին (անգլիացիների մօտ հնչւում է, **«ու»** William, whisky, սփիւռքում ճիշտ են գրում՝ Ուիլիամ, ուիսկի եւ ոչ թէ՝ Վիլյամ, վիսկի), բայց քանի որ աշխարհում ընդունուած լեզուագիտական գրաբանական օրէնքի համաձայն բանաւոր արտասանական փոփոխութիւնների դէպքում գրաւորը (գրահամակարգը) չի կարելի փոխել, ուստի **ւ**-ն պէտք է պահպանուի դասական գրելաձեւով: Բացի այդ, գրաբարում հնչուող **ւ**-ն կամ **վ**-ն **բաղաձայնից** յետոյ չի գրուել եւ ստացել է **ու**-ի արժէք (բացի «բարութ» բառից). օրինակ՝ զինուոր, բանուոր, բերուող, հնձուոր, զուարթ, Էդուարդ, Մանուէլ, **Նուարդ** (**Նու** արմատը մեր նախալեզւում նշանակել է՝ **կին**. սխալ է արմատը փոխել եւ գրել **Նվարդ**): Սակայն կրաւորական բայերում յարմար է **ւ**-ն գրել ինչպէս օրինակ՝ **գրում** է (գրաբարում՝ **գրուում** է): Սա հաւանաբար պէտք է կանոնարկուի:

Օ-Ո (տառերի անուանումը՝ օ—վո)

1940-թ. Գ. Մեւակը վերականգնեց Օ գրանշանը. մինչ այդ, Աբեղեանը այբուբենից հանելով **օ**-տառը, դրա հնչյունը «յանձնարարել էր» **ո**-ին՝ **օ**-ի փոխարեն **ո**-գրելով, իսկ **ո**-ի փոխարեն՝ **վո**: Սա նոյնպես անիմաստ փոփոխություն էր: Ահա մի «օրինակելի» նախադասություն. «Վորբը այդ որը վորոշում էր, թե որական վորքան վորդ պետք է բռնել»: Եթե այդ խեղագրությունը մնար մինչեւ այսօր, հաւանաբար մեզ խորթ կ'երեւար այսօրուայ ուղղագրությունը: Դասականով **օ-ո** ճիշտ գրելաձեւով հնարատր էր լինում նոյնահունչ բառերի տարբեր իմաստները չշփոթել, վերցնենք արդէն դասական օրինակ դարձած նախադասությունը՝ աբեղեանասեւակեան ուղղագրութեամբ. «**Հոտը** տարածվել էր գյուղով մէկ»: «Տարածուել» խօսքը այրուող աթարի հոտի՝ մասին էր, թէ՛ ոչխարի: Դասականում նման անորոշություն չի լինում, որովհետեւ գրւում է՝ «ծաղկի **հոտ**» եւ «ոչխարի **հօտ**»: Ահա մի քանի այդպիսի բառեր: **Հոտ**- անուշահոտ բուրմունք, անհոտ, հոտած. **հօտ**- ոչխարների խումբ, աղոտ-աղով խառն (ինչպէս՝ մեղրոտ, աղտոտ, շաքարոտ), աղօտ-մշուշոտ, աղօտ տեսողություն, **հոր**-(փոս), ջրհոր, **հորատող**, **հօր** կամ **մօր**- հայր, մայր՝ սեռական հոլովով, **հօրեղբայր**, **մօրաքոյր**: Յիշենք, որ բաց **օ**-ն փոխարինել է գրաբարեան **աւ**-ին, հետեւաբար պետք է գրել Պօղոս (ոչ թէ խեղագրութեամբ՝ Պողոս), որովհետեւ ծագել է Պաւել (Պօլ- Փօլ) կամ Պաւլոս (Պաւղոս) անունից՝ (**աւ=օ**)Պօղոս: Ճիշտ նոյն հիմունքով ունենք Աւգուստ(ոս)-Օգոստոս:

Միսալ է նաեւ խեղագրական **որեն** վերջածանցը. դասականով գրւում է **օրէն**, որը գալիս է **օրէնք** բառից՝ մարդկայնօրէն-մարդկային օրէնքով, համեստօրէն-համեստութեան օրէնքով եւ այլն (սրան կ'անդրադառնանք նաեւ յաջորդ բաժնում), բայց **օ**-ն, ըստ դասականի, բառամիջում գրւում է նաեւ ոչ միայն որոշ վերջածանցներում (նաեւ հետեւեալ 7 վերջածանցներում), ինչպէս՝ թափօն, իրօք, արդէօք, համառօտ, զարթօնք, այլեւ գրաբարում **աւ** ունեցող բառերում, որ դարձել են **օ**: Գործածական են այդպիսի շուրջ 70 բառեր՝ մօտ, կօշիկ, ամօթ, խօսք, յօդուած, զբօսաշրջիկ, գօտի եւ այլն: Գուրգէն Մեւակը **վերականգնեց դասականի համաձայն բառասկզբի օ**-ն եւ այդ արմատից ածանցուած բառերում՝ օդ-անօդ, օր- կէսօր, օգուտ-անօգուտ, **բայց չվերականգնեց բառամիջի կամ վերջածանցի օ գրանշանները**, ինչպէս օրինակ **յօրինել** դասական գրելաձեւը դարձաւ **հորինել**, ինչի պատճառով փոխուեց բառարմատը եւ դաձաւ **հոր(ինել)** (մնացածը տեսանք վերի օրինակներում), պահպանելով աբեղեանական խեղագրությունը:

Է-Ե (տառերի անուանումը՝ է- եչ)

1940-ին վերականգնուեց նաեւ **Է** գրանշանը, որը 1922-ին նոյնպէս վերացրել էր Աբեղեանը: Նրա խեղագրութեամբ այդ տառը փոխարինուեց **Ե**-ով, իսկ **Ե**-ի փոխարեն մտցրեց **յե գրելաձեւը**: Դարձեալ անհասկանալի եւ անիմաստ «բարեփոխում»: Ահա մի օրինակ այդ խեղագրությունից. «Յերեկ յերեկոյան, յերբ

գնում էյի եշը փնտրելու, տեսա վոր՝ արածում է»: Գուրգէնսեւական՝ երկրորդ
 ռեֆորմով **Է**-ն վերականգնուեց բառակցքում (եւ
 ածանցուած ձեւերում)՝ էական, անէանալ, էջ, էշ, նաեւ օժանդակ՝
 բայերում՝ է, էի, էիք, էինք, էին: Դասականում այս գրելաձեւով պահպանուում է նաեւ
 բառամիջի բայական դեմքը. գրենք դասական ձեւը եւ սեւական գրելաձեւը՝ (**էին**)-
 գրէին-գրեին, կամ (**էք**)-գրէք-գրեք: Խեղագրութեամբ վերացուեց նաեւ մաշտոցեան
 այն կանոնը, ըստ որի՝ **Է հնչիւնով** աւարտուող բառերի վերջում գրուում է միայն **Է** -
 քարէ կամուրջ, ոսկէ մատանի, բազէ, եթէ, միթէ, մարգարէ, բոպէ, Վահէ, Կարինէ,
 Նունէ: Սակայն այս կանոնը Գ. Սեւակը չվերականգնեց, թէեւ այբուբենում արդէն
 դասական **Է**-ն ինքը վերականգնել էր: Այսօր բառի վերջում լսուող **Է**-ն դարձեալ
 գրուում է՝ **Ե**.-քարէ, բազէ, Նանէ, ինչպէս որ այբուբենում **Է**- տառը չեղած ժամանակ:
 Սեւական խեղագրութեամբ պահպանուեց նաեւ **բառամիջի** **Է**-ի փոխարէն **Ե**-գրելը,
 Յիշենք, դասական **օրէն** վերջածանցը, որն այժմ էլ գրուում է **որէն** ձեւով, որովհետեւ
 հիմքում ընկած էր **աբեղեանական որէնք** բառը՝ փոխանակ **օրէնք**-ի (մեղմօրէն):
 Բացի այդ, **Է**-ն դարձնելով **Ե**, նոյնահունչ, բայց տարիմաստ բառերի տարբեր
 գրելաձեւը վերանում է՝ արմատի հետ միասին: Գրենք նման բառերի մի խումբ՝
 Գետ-գետափ, գետաձի, գետաբերան: Բայց նաեւ գէտ- տգէտ, գիտուն, գիտնական.
 Նոյն ձեւով՝ վեր-վերել, վերամբարձ, վերելք, վերանալ: Բայց նաեւ վեր(ք)- վիրաւոր,
 վիրակապ, վիրահատում: Մեզ (դերանուն)-մեզնից, մեզնով. Նաեւ՝ մեզ-միգել,
 միգամուղ, միգապարկ: Պետ (ղեկավար)-ատենապետ, պետութիւն, սեղանապետ.
 նաեւ պէտք-անպէտք, պիտանի, անպիտան: Մեր- կաթի սեր, սերուցք, նաեւ՝ սեր-
 սիրել, սիրասուն, սիրուի: Դէպքերի մեծ մասում բառամիջի **Է**-ն դառնում է՝ **Ի**.
 դրանով կարելի է կողմնորոշուել, թէ երբ գրել **Է**, երբ գրել **Ե**: Ահա նման բառերի եւս
 մի խումբ: Դէմ-դիմաց, դիմակ, դիմաւորել. շէն-շինարար, շինութիւն, շինանիւթ.
 վէմ-վիմագիր, վիմափոր. մեզ-միգամածութիւն, սեզ-սիգապանծ, վեճ-վիճել, ինչպէս-
 ինչպիսի, գէս- գիսաւոր: Այս **գէս** բառի առթիւ նկատենք, որ ներկայ
 ուղղագրութեամբ Վարդգէս անուան գրելաձեւը սխալ է. պէտք է գրել Վարդգէս,
 որովհետեւ **գէս** արմատ կամ վերջածանց չունենք: Այսպիսով խեղագրութեան
 պատճառով կորսուում է դասականի ոչ միայն որոշակիութիւնը՝ բառիմաստը, այլեւ
 բառարմատը: Փաստենք դա խեղագրական մի մտացածին նախադասութեամբ. «Ես
 սեր ուտելու հատուկ սեր ունեմ, բայց չեմ ուզում այդ սերը չարաշահել»: Ինչպէ՞ս
 հասկանալ. ուտելու համար յատուկ սեր՞ կայ, թէ՞ յատկապէս սիրում է սեր ուտել
 եւ ինչը՞ չի չարաշահում, ուտելիք սերը, թէ՞ ուտել սիրելը: Դասականով յստակ
 է՝ սեր (սերուցք) ուտելու սեր ունի (սիրում է): Յիշենք նաեւ որպէս օրինակ, որ արդէն
 փաստել էինք, թէ՝ մեր **միակ բառարմատը**, որ բաղկացած է մէկ՝ **Է տառից** (Է-ական,
 Է-ութիւն, Է-ապէս, ան-է), մինչեւ 1940թ.վերացել էր՝ **Ե**-ով գրելու (եյական, եյություն,
 եյապէս, անէ) խեղագրութեան պատճառով: Ինչպէս տեսնում ենք, Աբեղեանը միշտ
 մնում է մեզ հետ, թէեւ մեր լեզուաբանները պնդում են, թէ աբեղեանական
 խեղագրութիւնը ուղղուած է:

Խեղագրութիւնը մեծ խառնաշփոթութիւն ստեղծեց **Յ-յ(հի)** գրանշանի ուղղագրութեան մէջ: Հայերէնում **Ի- հնչիւնով** սկսուող բառերը հիմնականում գրուում են **Հ-** գրանշանով, սակայն մօտ 120-բառեր սկսուում են **Յ-յ(հի)** գրանշանով, որոնք վերացան արեղեանասեւակեան խեղագրութեան պատճառով: Դասական ուղղագրութեամբ **յ-ով** են գրուում, օրինակ՝ յաճախորդ, յարաբերութիւն, յիմար, յամառ, յաղթանակ, յաճախ, յօդուած, յիսուն եւայլն: Այդ բառերի թւում են նաեւ շատ բառեր, որոնք սկսուում են **յ-ով** եւ դրանք արմատական **յ** չեն, (երբեմն փոխարինելով **ի** նախդիրին). ու թէւ նոյնպէս հնչուում են ինչպէս **հ**, բայց չեն փոխում բառարմատի իմաստը: Գրենք մի քանի այդպիսի ոչ արմատական **յ-ով** բառեր, նշելով արմատը. յօգուտ (ի օգուտ)-որի արմատն է **օգ(ուտ)**, եւ իմաստը չի փոխուում նախդիր **յ-ի** պատճառով: Այդ բառը Արեղեանասեւակեան «ուղղագրութեամբ» գրում ենք **հոգուտ**, վերացնելով **օգ(ուտ)** բառարմատը, իսկ առաջացած **հոգ-**արմատը կապ չունի **օգ-** արմատի հետ եւ նմանում է մի այլ՝ **հոգ(ալ)** բառարմատին: Ուրիշ օրինակներ. յանձին-անձ, յաւելում- աւել, յաջող- աջ (ինչպէս՝ ձախորդ- ձախ), յարգել, յարգարժան- արգ(անարգել, արգահատել, արգասիք), յարդարել-արդ (արդ ու զարդ, արդուկել), յուղարկում (յուղարկաւորում)-ուղի արկանել (ուղարկել), յանուն-անուն. յիրաւի-իրաւ եւայլն: Այս դասական կանոնը խեղագրելով, դարձեալ բախում ենք բառարմատը իմաստազրկուելուն կամ կորցնելուն: Գրենք **հ-** հնչիւնով բառերի՝ **յ-ով** եւ **հ-ով** գրելու իմաստային տարբերութիւններով բառարմատներ՝ ցոյց տալու համար **յ-ն հ-**ով փոխարինելու արեղեանասեւակեան գրելաձեւի սխալականութիւնը: Հարկ(տուրք)-հարկադիր. հարկահաւաք, հարկաւոր: Յարկ(բնակարանի, շէնքի) յարկաբաժին: Հեղ-հեղել(թափել), ջրհեղեղ, հեղուկ, արիւնահեղութիւն: Յեղ (մի բան փոխել)-յեղափոխել, յեղաշրջել: Հար(խփուած)-հարուած, սիրահար, շանթահար, ամօթահար: Յար (կենդանանալ)- յարութիւն առնել, յարեալ, յառնել: Հանգել- մարել. յանգել(աւարտի գալ) եզրակացնել, եզրայանգել: Յարել (մէկի կողմը բռնել)- հարել (մածունը խփելով հարել):

Կարելոյր է նշել նաեւ, որ **հ-ով** հնչուող օտար ծագումով անունները, մանաւանդ Աստուածաշնչային, նոյնպէս գրուում են **յ-ով**՝ Յիսուս, Յուդա, Յովհաննէս, Յակոբ, Յովսէփ Յաբեթ եւայլն: Այդ անունները օտար լեզուներում նոյնպէս, **Ի-ով** չեն գրուում (Jesus, Judas, Johannes, Jakob, Jozef)

Խեղաթիրուել է նաեւ դասական այն կանոնը, ըստ որի, հայերէնում **ա-ով** եւ **ռ-ով** վերջացող բառեր չկան. այդ տառերից յետոյ գրվում է **յ-գրանշանը**, որը թէւ չի հնչում, բայց այդ բառերի փոխակերպութիւններում լսում եւ գրում է (բացառութիւն են սա, դա, նա, սրա, դրա նրա դերանունները, ապա, ասա, ահա, այո, քո բառերը եւ հրամայականները՝ գնա՛, արա՛, խաղա՛ եւայլն): Օրինակներ. մեղայ-մեղայական (ժողովրդի մէջ ասում են՝ մեղայաստծու), ներկայ- ներկայանալ, ներկայացում. բացակայ- բացակայել. ծառայ- ծառայութիւն. բարոյ- բարոյական, անբարոյական: Եթէ բառամիջի այդ **յ-ն** չլինէր, ստիպուած պիտի գրուէր ներկա**ա**նալ , անբարո**ռ**ական: Կամ ինչպէս՝ բացատրել աշակերտին, թէ «ընծայել» բառի մէջ որտեղից է յայտնուել **յ** -ն:

Յ-ն գրում է նաեւ ժամանակ ցոյց տուող բառերում՝ տարուայ, ամսուայ, օրուայ, ժամուայ: Մեր բարբառներում ունենք այ=է փոխակերպումը, որ հանդիպում է հեքիաթներում՝ հայաստանեան ուղղագրութեամբ, գայլ-գել, սայլ-սել, ծայր-ծեր, հայր, մայր- հեր, մեր, վայր ընկնել-վեր ընկնել : Երեւի թէ այս նոյն կանոնով է, որ օրական, ամսական ձեւերի հետ ունենք՝ օրեկան (օրուայ), ամսեկան (ամսուայ) ձեւերը (սա ի միջի այլոց): Անհասկանալի է խեղագրութեան անիմաստ տրամաբանութիւնը՝ վերացնել բառասկզբի եւ բառավերջի յ-երը (յօգուտ, անբարոյ), բայց յաւելել անիմաստ ու աւելորդ յ-եր (յեղանակ, յես, յերեխա):

Զանց առնելով դասականի ու խեղագրութեան ուղղագրական միւս տարբերութիւնները, կարող ենք դիտարկուած օրինակների հիման վրա եզրայանգել, որ արեղեանասեւակեան «բարեփոխումները» անտեղի էին, վնասակար էին, անտրամաբանական էին: Յիշենք հայագէտ Ֆրեդերիկ Ֆետիի բնորոշումը. «...Իմ գիտցած լեզուների մօջ հայերէնը բացառիկ է, նախ որպէս զարմանալի տրամաբանական լեզու, ապա նաեւ իր ճկունութեամբ նոր բառեր կազմելու դիւրութիւններով»:

Դասական ուղղագրութեան վերահաստատմանը խանգարող մտավախութիւնները

Ինչպէս տեսանք, խեղագրութեան նպատակն էր փոփոխել դասական ուղղագրութիւնը այնպէս, որ, բառապատկերները փոխելու միջոցով առաւելագոյնս հեռանալով ու կտրուելով աւանդական գրահամակարգից՝ հեշտացնել անցումը օտարալեզու գրերին (լատին կամ այլ) եւ կամ ձուլուելով ռուսականին՝ հող նախապատրաստել միալեզու եւ մէկ ընդհանուր մշակոյթով սոցիալիստական ազգի վերածուելու: Բարեբախտաբար դա չիրականացաւ եւ վերացաւ նաեւ կեղծ ռեֆորմի բոլշեիկեան քաղաքական հարկադրանքը: Եւ նկատի առնելով դասական ուղղագրութեամբ աւանդական գրահամակարգի «բարեփոխման» կարիք չունենալը, բայց նրա պահպանման խիստ կարեւորութիւնը (որոնք արդէն շարադրել ենք նիւթի սկզբում), անհասկանալի է դառնում անկախացած երկրի պայմաններում ազգային արմատներին վերադառնալու անհրաժեշտութիւնը չգիտակցելը եւ վերացած երկրի լեզուական դեկրետների գաղափարներին կառչած մնալը: Մեր մտաւորականների եւ մանաւանդ լեզուաբանների այն մասը, որոնք, ըստ կրթութեան ու գիտութեան նախկին լուսամիտ նախարար Լեւոն Մկրտչեանի ձեւակերպման, սեփականաշնորհել եւ իրենց մենաշնորհն են դարձրել լեզուական ողջ կալուածը, ցայսօր հանդէս չբերեցին մասնագիտական անկողմնակալութիւն՝ ազնուօրէն դէմ գնալու տիրող ուղղագրական կարծրամտութեանը: Մինչդեռ հասարակութեան զարգացումը կախուած է նրա ղեկավարների մտքի ճկունութեան ու յեղափոխականութեան դրսեւորումից: Նրանք այդպէս էլ մնացին նոյն հին մտակաղապարի գերին եւ չկարողացան կամ չուզեցին լսել աշխարհահռչակ լեզուագէտների ու մտաւորականների կարծիքներն ու յորդորները եւ կամ անարձագանգ թողեցին մեր օրերում առաջ քաշուած հարցերը: Ներկայացուած փաստարկներին եւ առաջադրած հարցերին հիմնաւոր հակափաստարկներ չեն

ներկայացնում, ինչպես Ռաֆ. Իշխանեանն է դիպուկ նկատել, պատասխանելով միայն «թւալ», «միթէ՞ պարզ չէ» եւ նման «հիմնաւորումներով»: Մեր կարծիքով դասականի վերականգնմանը խոչընդոտում են հետեւեալ պատճառներով:

Դասական ուղղագրութեանը վերադառնալու **առաջին խոչընդոտը սովորութեան ոյժն է**: Արդէն երրորդ սերունդն է սովորում արեղեանասեւակեան խեղագրութեամբ եւ այդ հիմքի վրայ են կրթութիւն ստացել Հայաստանում լեզուաբանութեան հարցերը այսօր տնօրինողները: **Վարժութեան կամ վարժուածութեան ախտը տիրապետել է թէ՛ լեզուաբաններին ու գրողներին, թէ՛ մանկավարժներին ու նրանց սաներին, հասարակայնութեանն ու ղեկավարներին**:

Պատճառաբանում են **խորհրդային տարիներին եղած տպագրութեան մեծ ծաւալը**, որոնց վերահրատարակելը մեծ ծախսերի հետ են կապում: Նրանք մոռանում են, որ մինչեւ այսօր սփիւռքում եւ մինչեւ 1922-թ Հայաստանում հրատարակուած ամբողջ գրականութիւնը, նաեւ 1500-ամեայ ազգային մատենագիտական ժառանգութիւնը գրուել են դասական ուղղագրութեամբ: **Խորհրդային հրատարակութիւնները կրկին հրատարակելու կարիք չկայ, պարզապէս, երբ կարիք լինի վերահրատարակելու, արդէն դա կ'արուի դասականով**:

Յաջորդ պատճառաբանութիւնը այն է, թէ՛ **դասական ուղղագրութեան միասնականացման համար պայմանները չեն հասունացել, որ անհրաժեշտ են պատմաքաղաքական, գիտական, մանկավարժական եւ հոգեբանական հիմնաւորումներ**: Նախ՝ խնդիրը հասունացել էր դեռ քսանական-երեսունական թուականներին, երբ մէկը միւսի ետեւից կազմում էին յանձնաժողովներ՝ փրկելու համար ստեղծուած խայտառակ վիճակը (տես՝ 1924, 1926, 1932թ.թ. մի քանի յանձնաժողովները), եւ վերջում՝ Գ. Սեւակի կատարած երկրորդ ռեֆորմը 1940-թ.: Բայց խնդիրը «հասունացած» չեն համարում, որպէս զի աւելի երկարաձգեն խեղագրութեան կեանքը եւ աւելացնեն դրանով ուսած սերունդների թիւը. Իսկ երբ համարեն հարցը հասունացած, արդէն ուշ կը լինի եւ կը կորցնենք գիտական կատարելութեամբ դասականը: Այսօր Ադոնցից աւելի մեծը կայ՝, հերքելու համար նրա հետեւեալ խօսքերը. «Ո՛չ գուտ լեզուագիտական, ո՛չ մանկավարժական, եւ ո՛չ անգամ գործնական որեւէ հիմ չեմ տեսնում շեղուելու աւանդական ուղղագրութեան սկզբունքից... Խեղագրութիւնը հէնց արեւելահայ գրական լեզուի շահերի դէմ է»:

Խեղագրութեան համեմատ դասականի կատարելութեան մասին բազմիցս վկայել են թէ՛ հայրենի, թէ օտար լեզուաբաններն ու մտաւորականները: Նախորդ գլխում տեսանք նաեւ **մեր ներկայ ուղղագրութեան խառնաշփոթ վիճակը**, երբ նոյնիսկ գուրգէնսեւակեան **կիսաբարեփոխումից** յետոյ էլ մասնակի վերականգնուած դասականի **կողքին միաժամանակ շարունակուում է արեղեանական կանոնների կիրառումը**: Այստեղ է իրենց պահանջած «գիտամանկավարժական» խնդիրը, երբ մանկավարժը չի կարող հիմնաւորել, թէ ինչու *Ե-ով* բառերի մի մասում *Ե-ն դառնում է - Ի* (յիշենք՝ *գետ- գիտուն եւ գետ-գետափ*) կամ *Օ-գրանշանի դասական գրելաձեւը վերականգնելու հետ միասին շարունակուում է Ո-ի պահպանուած խեղագրութիւնը* (*դասական օրէնք-ը, արեղեանական որէնք-ը, սեւակեան օրէնք-*

ը): Շատ են այդպիսի անբացատրելի եւ անտրամաբանական, չհիմնավորուած «բարեփոխումներ»: Ինչ վերաբերում է **պատմաքաղաքական հիմնավորումներին**, ապա դա արդեն մեզ յայտնի է **լեզուն քաղաքականացնելու**, քաղաքական խնդիրներ լուծելու բոլշեիկեան փորձից, **ինչն այսօր ձգտում են յաւերժացնել՝ գրկուած մնալու համար ազգային արմատներից**: Իսկ ներկայիս «մէկ ազգ, մէկ մշակոյթ» պետականօրէն հռչակուած գաղափարախօսութիւնը *պատմաքաղաքական հիմնավորում չէ՝ սփիւռքի հետ աւանդական ուղղագրութեամբ միասնականանալու համար*: Այդպիսի հիմնավորման մասին արդէն մեր մեծերը ասել են (նախորդ բաժիններում), **նշելով գրաբարի ու աշխարհաբար գրական լեզուների եւ ուղղագրական պորտալարը չկտրելու պարտադրանքը**: Ինչ վերաբերում է **հոգեբանական հիմնավորումին**, դա նոյնպէս արհեստական խնդիր է: Հարցն այն է, որ պարզապէս պէտք է ժողովրդին, մտաւորականութեանը բացատրել այս հիմնախնդրի ծագման եւ էութեան իրականութիւնը, ծանօթացնել դասական եւ խեղագրական ուղղագրութիւնների տարբերութիւններին, առանց որի մարդիկ չեն կարող համեմատել եւ կողմնորոշուել:

Այնուհետեւ: **Որպէս փաստարկ** ներկայացնում են այն, որ **հարկաւոր էր «լեզուի մէջ արտասանութեան եւ գրութեան միջեւ առաջացած էական տարբերութիւնները վերացնել»**: Լեզուագիտութեան մէջ ընդունուած օրէնք է՝ (կրկնենք)-*հնչական-արտասանական փոփոխութիւններին չպէտք է հետեւեն ուղղագրական փոփոխութիւններ, խախտելով գրահամակարգի կանոնարկուած օրէնքները*: Այլապէս կը փոխուեն աւանդական բառապատկերները եւ յաջորդ սերունդները, որոնց արտասանութիւնը փոխուած կը լինի (ինչը բնական է բոլոր լեզուների համար), չեն կարող կարդալ, հասկանալ նախորդ սերունդների ուղղագրութեամբ գրուածը:

Դասական ուղղագրութեան միասնականացման **հակափաստարկներից յաջորդը վերաբերում է սփիւռքում հայերէն օգտագործողների սահմանափակ քուաքանակին եւ նրանց նուազման միտումին**: Պէտք է *մէկընդմիջտ վերջ տալ լեզուական հարցերին քանակական տեսակէտով մօտենալը*: Մա գալիս է Աբեղեանից, ով գտնում էր, որ եւրոպական ազգերի մտաւորականները մեծ թիւ են կազմում եւ նրանք իրաւունք ունեն չփոխելու աւանդական ուղղագրութիւնը, իսկ մեզ համար դա թոյլատրելի է: Լեզուական հարցերը ի՞նչ կապ ունեն քանակի հետ: Եթէ աշխարհում մէկ հայ էլ մնացած լինի, նա պէտք է կարդայ-գրի իր աւանդական գրահամակարգի համաձայն՝ դասականով: Եթէ, նոյնիսկ, Աստուած մի արասցէ, հայը վերանայ աշխարհի թատերաբեմից, ինչպէս դրացի Բաբելոնը, Ասորիքը, Փիւնիկը կամ փարաւոնական Եգիպտոսը, միեւնոյնն է, աշխարհում մնացած յաջորդ սերունդները հայերէն կամ հնդեւրոպերէն ուսումնասիրելու համար պէտք է դիմեն մեր դասական ողղագրութեանը: Իսկ այն փաստարկումը, թէ՛ արդէն սփիւռքում էլ են գրում «նոր ուղղագրութեամբ», ճիշտ չէ, այնտեղ միայն այդպէս են գրում Հայաստանից արտագաղթածները եւ շատ կարելոր է, որ նրանց զաւակների համար հայրենիքից ուղարկուող դասագրքերը լինեն դասական ուղղագրութեամբ, այլապէս երեխաները կը խճճուեն տարբեր ուղղագրութիւններ միաժամանակ գործածելու պայմաններում, առաւել խորթանալով միմեանցից: Սփիւռքի վիճակը

բոլորովին անյուսալի չէ: Մերձաւոր արեւելեան երկրներից (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս Կիպրոս եւայլն) արտագաղթածները դեռ պահում են մայրենին: Մնում է զօրացնել նաեւ դպրոցները, իսկ Երեւանում հիմնել Սփիւոքի Համալսարան՝ *սփիւոքահայ երիտասարդութեան համար:*

Այո, «Կարթագենը պէ՛տք է կործանուի»

(Կարթագենի դէմ հռովմեական պատերազմի տարիներին հին Հռոմի ծերակոյտի նիստերին ամէն անգամ մի սենատոր միշտ հնչեցրել է. «Կարթագենը պէ՛տք է կործանուի» հարցադրումը):

Հակիրճ (լակոնիկ) *ձեւակերպելով* քննարկուող նիւթի եզրայանգումը, շեշտենք, որ **աբեղեանասեւակեան խեղագրութիւնը պէտք է մերժել՝**

--Այբուբենը խաթարելու՝ գրանշաններ (տառեր) պակասեցնելու եւ երկինչին՝ **«ու»**, **«էւ»** գրակապակցութիւնները որպէս տառեր մտցնելու համար.

--Վ,ւ,հ,յ,է,ե,օ,ո գրանշանների ուղղագրական խեղաթիւրումների պատճառով բառարմատների վերացման, նոյնահունչ, բայց տարիմաստ բառերի իմաստազրկման, աւանդական գրելաձեւի ու բառապատկերների խաթարման եւ արուած փոփոխութիւնների մէջ տրամաբանութեան բացակայութեան համար.

--Անտրամաբանական փոփոխութիւններով խառնաշփոթութիւն եւ քերականական չկանոնարկուած ու չպատճառաբանուած շեղումներ ստեղծելու համար.

--Հնդեւրոպական լեզուաընտանիքի համար ունեցած միջազգային լեզուագիտական արժէքը վտանգելու եւ գիտականօրէն հիմնաւորուած համազգային դարաւոր, աւանդական, **հայեցի գրահամակարգի** խաթարման հետեւանքով հայրենիքի մէջ **ծողովրդին գրագիտական ցածր մակարդակ պարտադրելու համար:**

Իսկ դասական ուղղագրութիւնը պէտք է վերականգնել, որովհետեւ լեզուագիտական աշխարհում ընդունուած արժեհամակարգի համաձայն՝ զարգացած, կանոնարկուած եւ մատենագիտութիւն ունեցող ստուգաբանական հիմքով ստեղծուած հնագոյն գրահամակարգին ձեռք տալ չի կարելի:

Զարգացած ազգերը արտասանութեան եւ գրաւորի միջեւ առաջացած տարբերութիւնների համար չեն փոխել իրենց աւանդական գրելաձեւն ու այբուբենը եւ գրահամակարգը չեն «բարեփոխել» հնչական համակարգի օրէնքներով:

Աշխարհին քաղաքակրթութիւն պարգեւած յունարենի 24 տառ պարունակող այբուբենը **Ի** հնչիւնով ունի հինգ տառ, որով գրում են տարբեր իմաստով բառեր՝ էպիդի, դինի, էլէիմոսինի, էլէինոլոդիսիս, էլեոպիիա, սիսինոտենիս եւ այլ բառեր, **երբեք չմտածելով դրանց բոլորի փոխարէն մէկ Ի գրել:**

Անգլերէնում «ՆՈ» (NO) հնչուող բառը ունի ժխտական «ոչ» իմաստը, նաեւ նշանակում է «գիտեմ», գրուելով know ձեւով: **Photo, pharmacy** (հնչել ֆոտո, ֆարմասի) բառերը գրում են աւանդական գրելաձեւով, թէեւ ունեն **F** տառը: Նոյն ձեւով «գրելթ» հնչուող բառը չեն դարձրել մէկ ձեւով գրուող բառ, որովհետեւ տարբեր իմաստ եւ գրելաձեւ ունեն--greate (մեծ, հոյակապ) եւ grate (վանդակ, քերել, գրգռել, ճոռալ): **Բայց նրանք յանուն անգրագէտների՝ ռեֆորմ չեն անում:**

Ֆրանսերէնում «ՏՕ» (հայերէն՝ հնչել՝ ՍՈ) արտասանութեամբ տարբեր՝ sot (տխուր), saut (ցատկում), seau (դոյլ), sceou (կնիք) բառերի գոյութիւնը պատճառ չի

հանդիսացել մէկ բառի տեսքով գրելու համար, ինչպէս մեր լեզուաբանները պաշտպանում են՝ հանգել (մարել) — յանգել (եզրակացութեան գալ) բառերը մի ձեւով գրել՝ միանման հնչուելու պատճառով:

Ցաւօք, մեր լեզուաբանները լեզուագիտական գործօնները թողած, արդարանում են իրենց չպատկանող խնդիրների պատճառաբանութիւններով:

Որպէս պատճառաբանութիւն յիշատակում են ժողովրդի ու պետութեան համար իբր բարդութիւններ չստեղծելու «մտահոգութիւնը, մի ամբողջ ժողովուրդ «անգրագէտ չդարձնելու» կեղծ մտավախութիւնը (թէեւ իրենց պաշտպանած ուղղագրութիւնը ստեղծուած է անգրագէտների մատչելի լինելու համար), **պետութեան համար այլ հարցերով զբաղուելու՝ տուեալ պահի քաղաքական լարուածութեան պատճառով անպատեհութիւնը եւ այս բոլորի հետ արեւելահայերէն գրական լեզուն իբր արեւմտահայերէնով փոխարինելու պատրանք ստեղծելը:**

Հայրենիքում լեզուաբանութեան մէջ եղանակ ստեղծողները այս վերջին «փաստարկումներով» **փաստօրէն նենգափոխում են ուղղագրական հարցը.**» այն ներկայացնելով **ժողովրդին որպէս «արեւմտահայերէն ուղղագրութիւն»** մտցնելու պարտադրանք: Մենք արդէն նշել ենք, որ չկան «արեւելահայերէն կամ արեւմտահայերէն ուղղագրութիւններ», մենք ունեցել ենք միայն *դասական ուղղագրութիւն եւ վերջին ութ տասնամեակներում՝ նաեւ Հայաստանում արեւելահայերէն խեղագրութիւն:* Այդ տրամաբանութեամբ **Յովհ. Թումանեանը, Աւ. Իսահակեանը, Վ. Տերեանը, Ալ. Շիրվանզադէն, Ե. Չարենցը եւ միւս արեւելահայ գրողները, որոնք գրել են դասականով** (պահպանուած են նրանց ձեռագրերի լուսանկարները), **համարուելու են արեւմտահայ գրողներ:**

Ներկայ ուղղագրութեան պաշտպանները պետութեան ու ժողովրդի համար «բարդութիւններ» չստեղծելու վարկածը, ինչն արտայայտուում է «մի ամբողջ ժողովուրդ անգրագէտ չդարձնելու» կեղծ մտահոգութեամբ, մէջտեղ են նետել՝ գիտական փաստարկումներ չունենալու պատճառով: Նրանք մոռացութեան են տալիս այն իրողութիւնը, որ այդ «մի ամբողջ ժողովուրդը» 18 տարուայ ընթացքում (քսանական-երեսունականներին) երեք ուղղագրութիւն սովորեց, իսկ այսօր «գրագիտութիւնից եւ ուղղագրութիւնից այդքան վախեցող» ժողովուրդը շատ յաջող կերպով օտար լեզուներ է սովորում, ափսոս որ հայերէնը ոտնատակ տալով: Գիտութիւն սովորելուց պէտք չէ վախենալ:

Այսօր փորձում են «պետութեանը խելք սովորեցնել», գրելով հետեւեալը. «Սակայն տրամաբանութիւնը յուշում է, որ պետութիւնը չի կարող լրացուցիչ բարդութիւններ ստեղծել իր եւ իր քաղաքացիների համար՝ *փոխելով գործող եւ կենսունակ մի համակարգ*»: Վստահաբար կարելի է ասել, որ, եթէ նոյնիսկ Արեւելանի խեղագրութեան տարբերակը մասամբ չարբագրուէր 1940-ին եւ շարունակուէր մինչեւ այսօր, դա եւս կը համարուէր «գործող կենսունակ համակարգ»: Երկու հարց տանք. նախ՝ այդ ինչպէ՞ս 18 տարուայ ընթացքում (1922-1940 թ.թ. արեւելահայերէն խեղագրութիւնը մտցնելիս) բարդութիւններ չեղան պետութեան ու իր քաղաքացիների համար, եւ յետոյ սրան յաջորդած այդ խեղագրութեան ու դասականի խառնուրդային (էկլէկտիկ) սեւակեան

«ուղղագրութիւնը» նոյնպէս բարդութիւններ չստեղծեց պետութեան ու ժողովրդի համար, իսկ **այժմ դասականը վերականգնելու դէպքում «տրամաբանութիւնը յուշում է» բարդութիւնների առաջացում:** Այնուհետեւ.

ո՞ր համակարգն է աւելի կենսունակ, 1600 տարուայ (այսօր էլ սփիւռքում գործող) համակարգը, թե՛ 85 տարուայ համակարգը, որն արդէն երկու փոփոխութիւն է կրել եւ գործածուել է ազգի՝ խորհրդային մի հատուածի կողմից միայն: **Ընդ որում դասականի մի քանի կանոնների վերականգնումով վերջ կը տրուի ըստ ճաշակի ուղղագրական խաղերին եւ նորից կը վերադառնանք համազգային աւանդական ուղղագրութեանը՝ յաւիտեանս ժամանակով:**

Ինչ վերաբերում է ժողովուրդը անգրագէտ մնալու մտավախութեանը, դա վախեցնելու միջոցով պայքարելու հնարներից մէկն է: Կազմակերպուած եւ ծրագրուած գործելու դէպքում, դպրոցների համար նախօրօք ուսուցչական կադրեր պատրաստելով (նոյնիսկ ամառնային արձակուրդների ժամանակ), մամուլի ու հրատարակչութիւնների ներկայացուցիչների համար (որպէս ապագայ սրբագրիչներ) վերապատրաստական դասընթացներ կազմակերպելով եւ անցումային որոշակի ժամանակ սահմանելով (առանց հին սերունդին պարտադրելու, մի կարճ ժամանակ հանդուրժելով նախկին ուղղագրութիւնը, ինչպէս որ եղաւ Արեղեանի դէպքում) կարելի է վերադառնալ դասական ուղղագրութեանը, ինչը սովորելու համար պէտք է իմանալ մօտաւորապէս ինը-տասը կանոններ եւ մէկ ամիս ժամանակ: Այս պարագայում տեղին է յիշել ֆրանսիացիների հետեւեալ յայտնի ասոյթը՝ **«Ֆրանսերէնի ուղղագրութիւնը սոսկալի համբաւ ունի, այն իմանալը մեծ պարծանք չէ, բայց մեծ ամօք է չիմանալը, ամենափոքր սխալը վարկաբեկում է հեղինակին եւ ուղղագրութիւն չիմանալը տգիտութիւն է եւ ծաղրելի...»:**Նկատի առնենք, որ աշակերտութեան եւ ուսանողութեան թիւը հարիւր հազարներ են եւ առաջին իսկ շրջանաւարտներով կ'ունենանք գրագէտ հասարակութիւն:

Այս ուղղագրական հարցերը լուծելի կը լինեն միայն պետական միջամտութեամբ: Միայն է դա կապել երկրի քաղաքական լարուածութեան հետ, որովհետեւ, ինչպէս նշել ենք յօդուածաշարի սկզբում, լեզուական ճիշտ քաղաքականութիւնը կարելոր գործօն է պետականութեան կայացման գործում: Եւ սա կապ չունի «երկրի գործերը խառն լինելու» հետ: ԱՄՆ-ի վերջին ընտրութիւնների նախընտրական հանդիպումներից մէկի ժամանակ տրուած հարցին թեկնածուներից մէկի պատասխանը՝ թէ դրանով կը զբաղուենք Իրաքի հարցը լուծելուց յետոյ, համընդհանուր ժպիտ էր առաջացրել երկրում, որովհետեւ **պետութեան ղեկավարը տարբեր հարցերի լուծմամբ զբաղուելու է ո'չ թէ յաջորդաբար, այլ գուզահեռ կերպով:**

Դասական ուղղագրութեան անցնելը ենթադրում է նաեւ կանոնարկել որոշ չլուծուած հարցեր, որոնք առաջացել են ժամանակի ընթացքում, երբ գրական լեզուի մէջ մտել են նաեւ աշխարհաբարից եկած բառեր՝ շեղուած դասական ուղղագրութիւնից (կամ այլ պատճառներով): Այս հարցերը, եւ **ընդհանրապէս դասական ուղղագրութեան վերականգնման խնդիրը պէտք է քննարկուեն համահայկական խորհրդածողովում:**

Այս յօդուածաշարը աւարտենք Պարոյր Սեւակի՝ Մաշտոցին ուղղուած «Խօսք հաւաստիքի» բանաստեղծութեան տողերով.

**Չէ՞ որ փոքրերս ու մեծդ մի օր---հաւասարում ենք, դառնում աջակից,--
--Դու գործն ես արել, մենք յանձն ենք առել:**

Մեր հայ լեզուի դասը թող լինի բոլորիս յանձնառութիւնը:

Գրականութիւն

Լեւոն Խաչերեան-(բ.գ. դոկտ.փրոֆ.)—Հայոց համազգային մաշտոցեան համակարգուած միասնական եւ միակերպ ուղղագրութեան պատմութիւնը (ե-ի դարեր). Լոս Անջելէս, 1999

Կարէն Ա. Սիմոնեան-(գրող, հրապարակախօս)-Կրեմլի յոյժ գաղտնի փաստաթղթերից մի քանիսը. Երեւան, 2007

Ռաֆայել Իշխանեան-(դոկտ.Փրոֆ.)-Հայերէնի ուղղագրութեան կանոններ Երեւան, 1991

Հիլտա Գալֆայեան-Փանոսեան-(դոկտ.փրոֆ.) Մեսրոպեանը ազգային միասնութեան նախապայման. Երեւան, 2005

Լեւոն Միրիջանեան-(բանաստեղծ)-Մէկ ազգ՝ մէկ ուղղագրութիւն

Պօղոս Գոճանեան-Ուղեցոյց դասական ուղղագրութեան, Վիեննա, 2006

**Նշան Որբերեան ԱՄՆ, Ռոտ-Այլընտ
Օգոստոս 2009 - Յունուար 2010**